Հայացք Երևանից, Հայոց Մեծ եղեռնի 80-րդ տարելիցին, հատուկ թողարկում

Երևան, 1995, թիվ 3, 88 էջ

Այս թողարկման մեջ խոսքը գնում է Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի՝ մեկ գրքույկում ի մի հավաքված ոչ մեծածավալ, սակայն հարցերի ընդգրկումների և դրանց նշանակության առումով շատ կարևոր հրապարակումների մասին:

«Հայացք Երևանից» գրքույկն սկսվում է հայ ժողովրդի պատմության հանրաճանաչ մասնագետ Ռիչարդ Հովհաննիսյանի «80 տարիներ՝ հիշողություն ընդդեմ մոռացության» խոսքով:

«Թեև միջազգային ընտանիքը բազում ձևերով կը ոգեկոչէ Հրէական ողջակիզումը և կտոնէ ֆաշիստական վարչակարգի անկումը, և թեև այս դեպքերը անբաժանելի մեկ մասը դարձած են համաշխարհային գրականութեան, ազգային և միջազգային ուսուցման և բազմաթիվ կառավարութիւններու որդեգրած քաղաքականութեան, անդին, համատարած լռութիւն մը կը տիրէ Հայկական ցեղասպանութեան նկատմամբ» (էջ 1): Հեղինակը «լռութեան այդ դավադրութեան» իրողությունը բացատրում է որոշ կառավարությունների աշխարհաքաղաքական դիտավորություններով, ռազմական դաշինքներով և միջազգային առևտրական համաձայնություններով:

«Վերջերս կը լսենք տեղեկութիւններ,- նշում է Ռ.Հովհաննիսյանը,-որ նույնիսկ Հայաստանի մեջ կան

ոմանք, որոնք շրջահայաց և խոհեմ քայլ կը նկատեն Հայկական ցեղասպանութեան յիշատակն ու կարևորութիւնը նսեմացնելը՝ ի սեր կենսական նկատառող քաղաքական յարաբերութիւններու և մատղաշ սերունդները մտային և հոգեկան վնասե խնայելու համար» (էջ 1):

Հայկական ցեղասպանությունն իր մեջ պարունակում է բոլոր այն գծերը, որոնք ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիան ներկայացնում է որպես «ոճրագործությունների այդ գագաթնակետի» բնույթը որոշող բաղադրիչներ:

Հայոց ցեղասպանությունն այն օրինաչափության հաստատումն է, որ XX դարի ցեղասպանությունների իրականացման գործում հարաճուն է գաղափարախոսական ազդակների դերը: Ռ.Հովհաննիսյանը բերում է Հելեն Ֆայնի հետևյալ խոսքերը. «20-րդ դարի կանխամտածված ցեղասպանության զոհերը՝ հրեաները, գնչուները, հայերը սպանվեցին, որպեսզի իրականացվեր նոր համակարգ ստեղծելու պետության ցանկությունը»: Այդ ցանկության կարևորագույն բաղադրիչը համարվում է պետության մեջ ազգային միատարրության ստեղծումը:

Այնուհետև հեղինակը հակիրճ բնութագրում է Հայոց ցեղասպանության հասկացության ներքին բովանդակությունը, այն իրականացնելու մեթոդներն ու եղանակները, եղեռնի հետևանքները, նրա ազդեցությունը հետագա սերունդների հոգեբանության ու վարքագծի վրա: Նա անդրադառնում է նաև Հայոց ցեղասպանության դասերին:

Երկու դիտողություն-նկատառում:

«Օսմանյան կայսրության մեջ,- գրում է Ռ. Հովհաննիսյանը,- կառավարութիւն և կուսակցութիւն միածուլեցան իբր երիտթուրք միապետութիւն, որը ստեղծեց «Թեշքիլաթ-ը մահսուսե» յատուկ կազմակերպութիւնը հայութեան բնաջնջումին հսկելու համար» (էջ 4):

Թվում է՝ այս միտքն անհաջող է ձևակերպված, քանի որ «Թեշքիլաթ-ը մահսուսեն» հիմնականում կազմված էր հանցագործ, կոտորածներին մասնակցելու համար բանտերից ազատված տարրերից և կոչված էր ոչ թե հսկելու ցեղասպանության գործընթացը, այլ իրականացնելու այն: Դրանք մարդասպան թալանչիների խմբեր էին, որոնք Թալեաթի ու նրա գերատեսչության կողմից նախապես մշակված բռնագաղթի ճանապարհներին նշանակված կետերում հարձակվում էին հայ տարագիրների վրա, կողոպտում ու բռնաբարում էին նրանց, խոշտանգում ու սպանում:

Այս հարցին հարկ ենք համարում անդրադառնալ, քանի որ վերջերս

գրականության մեջ հաճախ ենք հանդիպում նման շփոթ մոտեցումներ. հատուկ կազմակերպությանը վերագրվում են իրավասություններ, որոնք նա չի ունեցել և ունենալ չէր կարող: Որոշ դեպքերում այդ սխալը հետևանք է թուրքամետ պատմագրության կեղծարարությունների հանդեպ անուշադրության: Նորություն չէ, որ վերջինները գերխնդիր ունեն՝ հնարավորն անել ապացուցելու, որ օսմանյան պետական մեքենան կոտորածների կազմակերպմանն անմիջական մասնակցություն չի ունեցել, որ օսմանյան կառավարությունը հայերին, այո՛, տեղահանել է, բայց կոտորել՝ երբե՛ք. կառավարությունը երկար ժամանակ նույնիսկ տեղյակ չի եղել, որ քրդերն ու հանցագործ տարրերը հարձակումներ են գործել հայերի քարավանների վրա, որոնց հետևանքով զգալի թվով մարդիկ են զոհվել:

Բացարձակ կեղծիք է: Հայերի բնաջնջման ոչ միայն քաղաքականությունը, այլև իրականացման մանրամասնությունները մշակվել են Օսմանյան կառավարության և, առաջին հերթին, Թալեաթի գլխավորած ներքին գործերի նախարարության, ինչպես նաև իթթիհատ կուսակցության (հանձինս նրա գաղտնի կենտկոմի) կողմից: Ըստ այդմ էլ ցեղասպանությունը նահանգներում ու գավառներում կազմակերպել են իշխանության և երիտթուրքերի կուսակցության տեղական մարմինները, իսկ «Թեշքիլաթ-ը մահսուսեն» պարզապես նրանց ձեռքին զենք էր հայերի բնաջնջումն առաջ տանելու համար:

Մեր հաջորդ նկատառումը:

Պրոֆ. Ռ.Հովհաննիսյանի խոսքի առաջին պարբերության մեջ կարդում ենք. «Այս տարի նաև կը զուգադիպի 1895-ին Օսմանյան կայսրութեան մեջ տեղի ունեցած համիտեան ջարդերու հարյուրամեակին, որ մոտավորապես 100 հազար զոհեր խլեց...»:

Պատմագրության մեջ այս թվի շուրջ վեճեր շատ են եղել: Ոմանք գտել են, որ 1894-1896 թթ. ոչնչացվել է հազար, ուրիշները՝ 50, 100, 300 և նույնիսկ՝ 500 հազար հայ: Ի դեպ, նրանք, ովքեր գտնում են, որ ոչնչացվել է 300 հազար և ավելի մարդ, հայեր ու հայ գիտնականներ չեն, այլ օտար դիվանագետներ, միսիոներներ և պատմաբաններ: Տասնամյակներ տևած քննարկումներն ու ուսումնասիրությունները հաստատել են, որ այդ տարիներին ոչնչացվել է շուրջ 300 հազար հայ: Դժբախտաբար կոտորածներին զոհ գնացած հայերի թիվը ոչ միայն գիտական, այլև սուր քաղաքական հարց է: Եվ այդ խնդրում դեկլարատիվ հայտարարությունները, և այն էլ այնպիսի հեղինակության կողմից,

ինչպիսին Ռ.Հովհաննիսյանն է, վտանգավոր է: Համենայն դեպս, բերելով զոհերի այդ թիվը, հարկ է նաև ապացուցել, որ զոհերի թիվը ոչ թե 300 հազար է, այլ 100 հազար:

Թվում է՝ ոչ մի անհրաժեշտություն չկա թուրքական և թուրքամետ պատմաբաններին լրացուցիչ սնունդ տալ, մի բան, որ, դժբախտաբար, քիչ դեր չի խաղացել ցեղասպանության իրողությունը ժխտելու թուրքական ջանքերում: Ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարը ոչ թե լոկ պայքար է պատմական ճշմարտության, այն ոչ միայն պայքար է հայ ժողովրդի հոշոտված իրավունքների վերականգնման համար, այլև իր բնույթով միջազգային նշանակության շարժում է, «հիշողության պայքար ընդդեմ մոռացության», որպեսզի ժողովուրդների կյանքում առհավետ բացառվի զանգվածային բնաջնջումը:

Վերջին տարիների իրադարձությունները՝ Հայաստանում անկախ պետականության հաստատումը, ազգային զգացմունքների պոռթկումը, Սփյուռք-Հայրենիք կապերի ամբողջական ազատականացումը, սոցիալականի հանդեպ ազգայինի (ոչ քիչ դեպքերում նաև ազգայնականի) գերակայությունը մասնագետներին (հաճախ նաև ոչ մասնագետներին) մղում են վերանայելու, վերաիմաստավորելու այնպիսի մի դաժան երևույթ, ինչպիսին Հայոց ցեղասպանությունն է: Ցեղասպանության մղձավանջը նորից շրջանառության մեջ է դրվում, նորից ջանքեր են լարվում գտնելու, ստանալու ճակատագրական նշանակություն ունեցող հարցի պատասխանը՝ ինչո՞ւ և ինչպե՞ս պատահեց, որ մի ողջ ժողովուրդ բնաջնջվեց մի քանի ամսվա ընթացքում և բնաջնջվեց իր իսկ բնօրրանում: Ահա թե ինչու մեր օրերում այդ թեմային վերաբերող ուսումնասիրություններում և նույնիսկ հոդվածներում հաճախ կարելի է հանդիպել «պետք է նոր աչքերով նայել կատարվածին» արտահայտությանը: Նման մոտեցումը առկա է նաև ներկայացվող գրքույկում:

* * *

Ահա նույն գրքույկում հրատարակված՝ Տ.Հայրապետյանի «Մի հայտարարված ցեղասպանության պատմություն (19-րդ դարի մեծ տերությունների կոնցեպտի համակարգով պայմանավորված քաղաքական իրողությունները և Արևմտահայաստանի ազատագրության մեթոդաբանության խնդիրները)» աշխատության առաջին պարբերությունից մի հատված. «Չնայած տասնամյակների ընթացքում հայ և այլազգի մասնագետների կատարած մեծածավալ աշխատանքին... այնուամե-

նայնիվ առանցքային հիմնահարցը՝ Արևմտահայաստանում ազատագրական պայքարի լիակատար ձախողման և ազգային աղետի պատճառահետևանքային կապի համապարփակ ներկայացման խնդիրը մնում է չլուծված» (էջ 8): Օրինաչա՞փ է նման մոտեցումը: Իհարկե՝: Եվ միանգամայն իրավացի է հեղինակը, երբ գրում է. «...Դեռ երկար ժամանակ և մասնագիտական մեծ աշխատանք կպահանջվեն, որպեսզի 19-րդ դարի 20-ականների վերջից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներն ընկած շուրջ հայրուրամյա պատմական փուլի քննադատական վերլուծությունը հնարավորին չափ սպառիչ պատասխան տա հայ հասարակությանը հուզող հարցերին»:

Ըստ այդմ էլ հեղինակը փորձում է նոր մեկնաբանություն տալ հայոց ողբերգության պատճառներին: «Թեև պատմագիտության մեջ ընդունված է, որ Հայկական հարցը «ասպարեզ է իջել և Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս է դարձել 19-րդ դարի 70-ական թթ., 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո» (Զոն Կիրակոսյան), քաղաքագիտության տեսանկյունից անհնարին է դիտվում Արևմտահայաստանի և արևմտահայության ճակատագիրը որոշած, ընդհանուր տրամաբանական կապ ունեցող ռազմաքաղաքական գործընթացի տևողականության հատվածային մասնատումը» (էջ 8-9):

Տ.Հայրապետյանը գտնվում է, որ Հայկական հարցի ժամանակագրության սկիզբը պետք է համարել ոչ թե 1878, այլ 1828-29 թթ., քանի որ «հենց 19-րդ դարի սկզբից Հայաստանն առնչվեց միջազգային դիվանագիտությանը» և «այդ ժամանակաշրջանում արդեն իսկ ձևավորված էին այն առարկայական իրողությունները, որոնք կանխորոշելու էին Արևմտահայաստանում ազատագրական պայքարի դատապարտվածությունը»: Չբավարարվելով այս եզրահանգումով, հեղինակը շարունակում է. «Կրկին և կրկին անդրադառնալով 19-րդ դարի քաղաքական զարգացումներին, հիմք ենք ստանում փաստել, որ Արևմտահայաստանի ազատագրության համար պայքարի մեթոդաբանությունն ի սկզբանե մեռելածին էր»:

Թվում է՝ նման բնութագրություններից հետո հեղինակը պետք է գրիչը վար դներ, կամ իրապես ապացուցեր, թե ինչո՞ւ էր արևմտահայ ազատագրական շարժումը «դատապարտված», և եթե դատապարտված էր «պայքարի մեթոդաբանության» հետևանքով, ապա գոնե ընդհանուր գծերով ներկայացներ այն, ինչի կիրառումը հայկական շարժումը դուրս կբերեր հաղթանակի մայրուղի, մանավանդ, որ հեղինակն իր

նպատակն է համարում մեր օրերում «առավելագույնս խուսափել պատմության կրկնությունից»: Դժբախտաբար հեղինակն այդպես չի վարվում: Նա գերադասում է ոչ թե գիտական պատճառաբանությունը, այլ քննադատի գրիչը, մեծ կրքով մերժում է այն, ինչ արվել է, բայց համառորեն խուսափում է անդրադառնալ գլխավորին՝ իսկ ի՞նչ պետք է արվեր աղետից խուսափելու համար: Բոլորի և ամեն ինչի մերժումը հեղինակի ուսումնասիրությանը զրկել է նրա գլխավոր նշանակությունից՝ միջոցներ առաջարկել, որ, իրոք, պատմությունը չկրկնվի:

Տ.Հայրապետյանը նաև մերժում է այդ գործում դիվանագիտության վճռորոշ դերը, քանի որ պետականության բացակայության պայմաններում դիվանագիտությունը «դառնում է ինքնաբավության վրա աշխատող, ինքնանպատակ գործող, ինքնախաբեության նկատմամբ խոցելի և դրանով իսկ տվյալ երկրի և ժողովրդի համար խիստ վտանգավոր գործառույթ»: Դժվար է համաձայնվել նման անվերապահ պնդման հետ, քանի որ պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր, երբ դիվանագիտությունը (պայքարի մյուս ձևերի զուգակցությամբ) վճռական դեր է խաղացել ժողովուրդների ազատագրության գործում , իսկ, օրինակ, հրեաների պետականության վերականգնման խնդրում նրա դերն, ուղղվակի, անփոխարինելի էր:

Հազիվ թե արդարացի է հեղինակի նաև այն մեղադրանքը, թե «17-18-րդ դարերում առանձին ազգային գործիչների՝ Հայաստանի ազատագրությանն ուղղված ձեռնարկումները անհատական դիվանագիտության արատավոր պրակտիկայի արմատավորման առաջին քայլերն էին, որ հետո փոխարինվեցին կուսակցական դիվանագիտությամբ...»: Մի՞թե պետականությունից զուրկ ժողովուրդների պատմության մեջ հայկական անհատական դիվանագիտությունը բացառիկ երևույթ է: Իհարկե, ոչ: Իսրայել Օրին ու Հովսեփ Էմինը լոկ անհատներ չէին, այլ հայ հասարակության որոշակի խավերի (տվյալ դեպքում գուցե նաև ամբողջ հայ ժողովրդի) ձգտումների ու իղձերի արտահայտիչներ: Նրանք, որտեղ էլ որ եղել են և ինչ էլ որ արել են, միշտ զգացել են հայ հասարակության զարկերակի տրոփյունը, կատարել նրա պատվիրանները: Սա լոկ հայտարարություն չէ, այլ պատմական իրողություն:

Այո՛, դիվանագիտության ասպարեզում հայերը ուժեղ չէին, նրանք փորձ ու հմտություն չունեին, և շատ հաճախ գործել են նաև ոչ թե «ժամանակի քաղաքական զարգացումների տրամաբանության պահանջներին համապատասխան», այլ «աշխարհի և իրականության սեփա-

կան ընկալման» բացարձականացմամբ: Բայց մի՞թե ակնհայտ չէ, որ դա նրանց ոչ թե մեղքը, այլ դժբախտությունն էր: Աշխարհում շա՞տ են այն ժողովուրդները, որոնք պատմական տևական ժամանակահատվածում՝ ավելի քան 1000-1200 տարի, գտնված լինեն օտար լծի տակ և այն էլ ոչ թե մեկ, այլ մի քանիսի տիրապետության տակ միաժամանակ: Այդպիսի ժողովուրդները բնականոն զարգացման մայրուղուց դուրս նետվածներ են, և որ նրանք դիվանագիտական կողմնորոշումների մեջ հասուն չէին, հետևանք է ոչ թե թերզարգացածության, այլ լուծում պահանջող խնդիրների արխիբարդության:

Ըստ այդմ էլ կարծում ենք իրավացի չէ հեղինակը, երբ Հայկական հարցն ամբողջությամբ խցկում է եվրոպական կոնցեպտի համակարգի մեջ: Առավել ևս տարօրինակ է, երբ մեծ տերությունների միջև եղած հակասությունները, նրանց աշխարհաքաղաքական նպատակադրումները՝ ենթարկվում են «միջազգային հակասությունները բացառապես մեծ տերությունների ակումբի շրջանակներում հարթելու գիտակցված համագործակցությանը», ինչը Եվրոպային քառասունամյա խաղաղություն պարգևեց: Եվրոպային՝ գուցե, չնայած խաղաղություն ասածը տվյալ դեպքում խիստ հարաբերական է քանզի առկա են 1830 և 1848 թթ. հրդեհները՝ Եվրոպայի սրտում, Գերմանիայի միավորման ու Արևելք-Արևմուտք, այսինքն՝ Ռուսաստան-Եվրոպա՝ հակասությունները հակադրության վերածվելու գործընթացները: Եվ, որ Ռուսաստանը շատ հաճախ ձեռնապահ էր մնում նոր տարածքների տիրանալուց, հետևանք էր ոչ թե կոնցեպտի սկզբունքներին նրա հավատարմության, այլ մյուս տերությունների ախորժակը չգրգռելու մտահոգության:

Հեղինակն իրավացի է, որ տերությունները, մասնավորապես միապետական կարգեր ունեցողները, ձգտում էին ընդհանուր ճակատ ստեղծել հեղափոխությունների և ազգային շարժումների դեմ, սակայն անհավանական է թվում այն պնդումը, թե նրանց համար գլխավորը հեղափոխության ու պատերազմի դեմ պայքարն էր: Անհավանական է թվում, որովհետև նրանց համար գլխավորը եղել է և կոնցեպտի կազմավորումից հետո էլ շարունակվում է մնալ գիշատիչ շահը՝ նոր տարածքների ու շուկաների տիրանալու անսանձ կիրքը: Խոհեմ չէ աչքաթող անել, որ, անկախ պետական կառուցվածքից, բոլոր այդ տերությունները զարգացման կապիտալիստական փուլում էին, և նրանց համար հումքի նոր աղբյուրն ու վաճառահանման շուկան հարցերի հարց էին և, պատահական չէ, որ այդ տերություններում ազգային գիտակ-

ցությունն ուղղակիորեն կրում էր մարտնչող ազգայնամոլության ու մեծ ծապետական նկրտումների բնույթ, ինչը և նրանց հարաբերություններում հիմնարարը դարձնում էր ոչ թե ընդհանուր, միավորող, այլ եսակենտրոն, տարանջատիչ, իրար հակադրող շահերը: Ըստ այդմ էլ Անգլիան հովանավորում էր ժողովուրդների (ոչ բոլոր) ազատագրական պայքարը ոչ թե իր ժողովրդավարական արդարամտության մղումով, այլ նորանոր տարածքներ ու ազդեցության շրջաններ ձեռք գցելու դիտավորությամբ:

Անվերապահորեն պնդել, թե եվրոպական տերությունները ձգտում էին Օսմանյան կայսրության մասնատմանը, իսկ Ռուսաստանը, ընդհակառակը, ջատագովում էր ստատուս քվոայի քաղաքականություն, նույնպես ճիշտ չէ:

XIX դարում Ռուսաստանը երեք անգամ պատերազմել է Օսմանյան կայսրության դեմ՝ 1828-29 թթ., Ղրիմի պատերազմը և 1877-1878 թթ.: Իսկ Եվրոպա՞ն, եթե չհաշվենք Աֆրիկայի ռազմական մի քանի ընդհարումները: Ի՞նչ է, Ռուսաստանը Օսմանյան կայսրության դեմ պատերազմում էր նրա ամբողջականությունը պաշտպանելո՞ւ համար: Իսկ Եվրոպան թուրքերին օգնում էր կայսրությունը քայքայելո՞ւ համար: Իհարկե ոչ: Օսմանյան կայսրության հանդեպ ռուսական քաղաքականության էվոլյուցիան հետևանք էր ոչ թե երկու տերությունների միապետական կարգերի հոգեհարազատության, այլ Ռուսաստանի դեմ եվրոպական տերությունների համատեղ գործողությունների:

Ի դեպ, նեղուցներից Ռուսաստանի հրաժարվելը, ինչի մասին նշում է Տ.Հայրապետյանը, հետևանք էր ոչ թե եվրոպական հավասարակշռությունը չխախտելու նրա մտահոգության, այլ այն բանի, որ Ռուսաստանին առաջարկում էին նեղուցներն առանց Կ.Պոլիսի, իսկ նրա վարդագույն երազը Ցարգրադին տիրանալն էր: Այդ, ինչպես նաև Հայաստանի վրայով «տաք ջրեր» դուրս գալու ձգտումը ռուսական քաղաքականության մեջ XIX դարում առաջնային դեր է խաղացել և իրականություն չի դարձել, քանի որ դրա դեմ դուրս է եկել միավորված Եվրոպան:

Ղրիմի պատերազմում Եվրոպան ռազմական ուժով Ռուսաստանին հարկադրեց ձեռնպահ մնալ իր իղձերի իրականացումից, իսկ 1878 թ. Բեռլինում նույն բանն արվեց դիվանագիտական ընդհանուր ճակատի ուժերով: Ահա այդ իրողությունը Ռուսաստանին վերածեց Օսմանյան կայսրության «մեծ բարեկամի ու հովանավորի»: Հեղինակը միանգամայն իրավացի է, երբ գրում է, որ XIX դարի վերջերին Ռուսաստանը

հայացքը շրջեց դեպի Միջին և առավել ևս, Հեռավոր Արևելք. ինչը նույնպես որոշակի դեր խաղաց նրա մերձավորարևելյան քաղաքականության մեջ օսմանամետ դիրքորոշման ձևավորման գործում: Հեռավոր Արևելքում գործողություններ ծավալելու համար պարտադիր պայման էին Մերձավոր Արևելքի, տվյալ դեպքում Օսմանյան կայսրության հետ հաշտ հարաբերությունները: Սակայն հազիվ թե իրավացի է այն պնդումը, թե «Ռուսաստանը գտավ նաև «տաք ծովեր» տանող ավելի մատչելի և ավելի արդյունավետ ճանապարհներ, քան Արևելյան Անատոլիան էր»: Խոսքը Պարսկաստանի կամ Աֆղանստանի վրայով «տաք ջրեր» դուրս գալու մասին է: Պարսկաստանի վրայով ուղղի՝ իր հետևանքներով Հայաստանի տարբերակից շատ բանով չէր զանազանվում, իսկ աֆղանական տարբերակը ոչ միայն հեշտ չէր, այլև անիրականանալի, քանի որ անխուսափելի էր դարձնում պատերազմը Անգլիայի հետ: Եվ պատահական չէ, որ Առաջին աշխարհամարտի տարիներին, այսպես կոչված, «անատոլիական տարբերակը» նորից մղվեց առաջ, և ռուսական զորքերը էրզրումից արևմուտք՝ Անատոլիայի խորքերը չմտան, այլ շարժվեցին դեպի Դիարբեքիր:

Անհնար է համաձայնվել նաև Տ.Հայրապետյանի հետևյալ մտքի հետ. «Եթե տասնամյակներով թմբակահարվող Սան-Ստեֆանոյի պայմանագրի16-րդ հոդվածը համեմատենք բուլղարական որևէ աննշան տարածքի անվտանգությունը երաշխավորող պայմանագրային պարտավորության հետ, դժվար չէ նկատել, որ հայերի ապահովությունը երաշխավորելուն կոչված հոդվածը ռուսական դիվանագիտության համար սոսկ հերթապահ բնույթ էր կրում: Հավանաբար հենց այդ էր պատճառը, որ արդեն 1878 թ. մայիսի 30-ին Լոնդոնյան համաձայնագրով, դեռ մինչև Բեռլինի կոնգրեսը, Ռուսաստանը համաձայնվեց, որ «Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի մեջ Հայաստանի վերաբերյալ խոստումները տրվեն ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև Անգլիայի անունից», և որ ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի հաշվին» (էջ 18): Անհնար է համաձայնվել ոչ թե նրա համար, որ կարծում ենք, թե հայերի անվտանգությունը ցարի համար հետաքրքրություն էր ներկայացնում, այլ այն պարզ պատճառով, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով ռուսական բանակը գրավված տարածքներում (Արևմտյան Հայաստանում) մնում էր այնքան ժամանակ, քանի դեռ այդտեղ բարենորոգումներ չէին իրականացվել: Իսկ եթե նկատի ունենանք, որ այդ բարենորոգումների բովանդակությունը

որոշված չէր, ապա մի՞թե ակնհայտ չէ, որ ռուսական բանակը Արևմտյան Հայաստանում մնում էր ոչ թե բարենորոգումների համար, այլ այն լոկ պատրվակ էր գրավված տարածքներում գերիշխանություն հաստատելու համար, որը, վերջին հաշվով, հայ ազգաբնակչության անվտանգության համար ամենաիրական երաշխիքն էր:

Ինչ վերաբերում է Սան-Ստեֆանոյի պայմանագրի մի շարք դրույթներից Ռուսաստանի հեշտությամբ հրաժարվելուն, ապա դա այդպես թվում է միայն, քանի որ Ռուսաստանին նորից պատերազմ էր սպառնում միավորված Եվրոպան: Պաշտոնական գրագրությունները վկայում են, որ ռուսական արքունիքն իր դիվանագիտության ղեկավարներից պահանջում էր նույնիսկ մեծ զիջումների գնալ, միայն թե խուսափեր պատերազմից, քանի որ Ռուսաստանը հյուծված էր ու անկարող պատերազմելու եվրոպական միացյալ ուժերի դեմ: Ղրիմի պատերազմի խայտառակ պարտության ուրվականը շարունակում էր տիրականորեն թևածել ցարական արքունիքում: Այդ կանխորոշեց նաև Բեռլինի վեհաժողովի ընթացքը: Իսկ Բեռլինում խաղացվեց պատմության մեջ հազվադեպ հանդիպող մի տրագիկոմեդիա՝ պատերազմող ազգերի ադրոները գրավեցին պատերազմին ամենևին չմասնակցած տերությունների ներկայացուցիչները, որոնցից ոմանք, առանց մի կաթիլ արյուն թափելու, կարկանդակի ամենամեծ պատառներին տիրացան:

Բեռլինը ռուսական դիվանագիտության ոչ թե ամլության, այլ դժբախտության ծնունդն էր: Կարդացեք թե՛ Գորչակովի և թե՛ Շուվալովի գրառումները և դրանում կհամոզվեք:

Եվ այդ դժբախտությունը բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար: Բեռլինից հետո ցարը, փաստորեն, խրախուսեց սուլթանի հայաջինջ քաղաքականությունը:

«Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը,- իրավացիորեն գրում է Տ.Հայրապետյանը,- ռուսական դիվանագիտության մեջ ոչ մի էական փոփոխություն չմտցրեց: Ռուսաստանը գործադրեց բոլոր ջանքերը Թուրքիան Անտանտի ճամբարում պահելու, կամ, լավագույն դեպքում, պատերազմում նրա չեզոքությունն ապահավելու ուղղությամբ»: Ի դեպ, նույն կերպ էին վարվում նաև Անտանտի մյուս պետությունների կառավարությունները: Գործնականում Անտանտի և առանցքի պետությունների միջև դիվանագիտական պատերազմ էր գնում Թուրքիայի համար: Սակայն Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում) ստատուս քվոյի պահպանման խորհրդային քաղաքակա-

նությունը ցարական քաղաքականության շարունակություն համարելը միայն արտաքուստ է իրավացի: Դիվանագիտության ժառանգականությունը չէ, որ այս խնդրում էական դեր է խաղացել, և, ընդհանրապես, պնդել, թե Արևմտյան Հայաստանի հարցում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ձեռնապահ դիրքորոշում ուներ, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում: Եթե նույնիսկ ընդունենք, որ Թուրքահայաստանի մասին դեկրետը և Վանի, Երզրումի, Բիթլիսի վիլայեթները (լրիվ, թե իրենց որոշ մասերով) Հայաստանի հետ միավորելու ռուսական կառավարության առաջարկները Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոցներ էին, այնուամենայնիվ տվյալ պարագայում ստատուս քվոյի քաղաքականություն վարելու մասին խոսելն մինչև վերջ պատճառաբանված չէ:

Շարադրվածից պարզ երևում է, որ Տ.Հայրապետյանը Հայկական հարցի լուծման բանալին ոչ միայն տեսնում է Հայաստանից, հայ հասարակական-քաղաքական ուժերի գործունեության շրջանակից դուրս, այլև այն համարում է դատապարտված, այսինքն մերժում է այդ խնդրի՝ հայերի համար բարեհաջող լուծման հնարավորությունը: Բայց աշխատության 22-րդ էջում շրջադարձ է կատարվում և նշված է, թե դժբախտության գլխավոր պատճառը Ռուսաստանին ապավինելն էր: «Ռուս-թուրքական յուրաքանչյուր պատերազմից և քաղաքական համաժողովներից հետո առաջ եկած «հուսախաբության» պատճառներն ի վերջո պետք է փնտրել հարյուր տարի շարունակ խաբված ժողովրդի քաղաքական մտքի, ազգային առաջնորդների, նրանց դիվանագիտությունների համատեքստում»: Այլ կերպ ասած, եթե հայերը ճիշտ վարքագիծ, կողմնորոշում և շրջահայացություն դրսևորեին, ապա Հայկական հարցը կարող էր ունենալ հայերի համար բարեհաջող լուծում:

Իսկ որո՞նք էին հայ հասարակական-քաղաքական ուժերի սխալները: Հեղինակը Լեոյից մի քանի մեջբերումներ է կատարում և արձանագրում հայերի «բարձր և հաստատուն դիրքը Օսմանյան կայսրությունում», անգամ օգտագործում է հայերի «արտոնյալ վիճակ» արտահայտությունը: Այո՛, Կ.Պոլսի հայության մի մասը բարվոք ու բարգավաճ վիճակում էր: Բայց չէ որ Պոլիսը Հայաստան չէր: Ճիշտ այնպես, ինչպես բարգավաճ վիճակում էին Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Բաքվի հայության որոշ խավեր, իսկ դա որևէ կերպ անդրադառնո՞ւմ էր Արևելյան Հայաստանի վրա: Եթե այո, ապա ավելի շատ՝ բացասաբար (օրինակ, աշխատունակ տարրի արտահոսը):

Իրոք, պոլսահայ ամիրաները ձգտում էին հայ կյանքում ղեկավարդեր ունենալ, և ինչպես հեղինակն է նշում. «Ավելի տրամաբանական կլիներ, եթե մեծ կարողությունների տիրացած հայ ամիրայությունը ոչ թե կուսակցություններ ստեղծեր պատրիարքական աթոռը ներազգային կռվախնձորի վերածելու համար, այլ իր միջոցներն ուղղեր նախապատրաստելու իրական ազատագրական պայքարը...»: Անվիճելի, բայց նաև միամիտ հարցադրում է: Միամիտ, որովհետև հայ ամիրայության վարքագիծը բխում էր ոչ թե անձերի բնավորությունից, այլ հասարակական այդ խավի բնույթից, աշխարհընկալումից: Հայ ամիրայությունը օսմանյան բուրժուազիայի մի հատվածն էր՝ նրան հատուկ հեռատադիմական-կիսասավատատիրական մտածելակերպով ու ձգտումներով: Նա հայ կյանքի ղեկավար էր ձգտում դառնալ ոչ թե ի հաշիվ օսմանյան վարչակազմի, այլ հայոց պատրիարքի իրավունքների: Ամիրայության ճնշող մեծամասնությունը միայն անունով էր հայ, և արևմտահայ գյուղացու ու քաղաքաբնակ լայն խավերի ձգտումները, ազգային իղձերը նրա համար խորթ էին: Ամիրաներն օսմանյան միջավայրի ծնունդ էին և առանց այդ միջավայրի խեղդամահ կլինեին, ինչպես ջրից ափ նետված ձուկը: Հետևաբար, արդարացի չէ, ամիրաների վարքագիծը նկատի ունենալով, մեղադրանք ներկայացնել արևմտահայության մյուս քաղաքական ուժերին:

Գնահատականներ տալուց առաջ հարկ է ուսումնասիրել ու գիտենալ պատմությունը: Շարունակենք մեջբերումները. «... Ի տարբերություն անկախության ձգտող այլ ժողովուրդների, որոնց համար 19-րդ դարը ազատագրության լայն հնարավորություններ էր ստեղծելու, հայերը ոչ նշված փուլում և ոչ էլ հետո կազմակերպված աշխատանք չտարան Եվրոպայում իրենց ազատագրական պայքարի համար անհրաժեշտ ազդեցության հենք և հասարակական կարծիք ձևավորելու ուղղությամբ... Միայն դարավերջին, երբ այդ ոլորտում բացթողումները ողջ թափով իրենց զգացնել կտան, հայ քաղաքական ուժերը տարիների բացը լրացնելու հախուռն ձգտումով կդիմեն անխոհեմ բախտախնդրության՝ առիթ տալով զանգվածային կոտորածների» (էջ 24):

Ընդունենք, որ ասվածի առաջին մասը իրականությանը համապատասխանում է, բայց ընդունենք նաև, որ այն էական արևէ ազդեցություն չէր ունենալու (և ունենալ չէր կարող) իրադարձությունների զարգացման ընթացքի վրա: Ոչ թե XIX դարի վերջին ,այլ XX դարասկզբին ՀՅԴ Եվրոպայում իրոք քարոզչական մեծ աշխատանք ծավալեց, որն,

ավաղ, դրական որևէ արդյունք չտվեց: Ինչ վերաբերում է «անխոհեմ բախտախնդրությանը», որն առիթ տվեց «զանգվածային կոտորածներ-ի», ապա հարկ է ամենայն որոշակիությամբ ասել, որ տասնամյակներ շարունակ քաղքենական սալոններում և թուրքերի օգնությամբ հյուսված այդ թեզը հեքիաթ է: Ով քիչ թե շատ ծանոթ է XIX դարի վերջին քառորդի իրադարձություններին, դրանում ավելի քան համոզված է:

Հայերին ֆիզիկական հաշվեհարդարի ենթարկելու աբդուլհամիդյան քաղաքականությունը ձևավորվեց Բեռլինի կոնգրեսից անմիջապես հետո և մեկնարկեց 1883 թվականին, իսկ հայ ազգային շարժումները սկսեցին ծավալվել 80-ական թվականների վերջերին (ընդունված է դրանց սկիզբը համարել 1890 թ.): Հայ քաղաքական կուսակցությունները ևս ձևավորվեցին 1880-ական թվականների երկրորդ կեսին (1885, 1887 և 1890 թթ.): 80-ական թվականներին արձանագրված չէ հայկական որևէ լուրջ շարժում, ապստամբություն կամ նման այլ բան, որը պատրվակ դառնար կոտորածների համար:

Սուլթանը որոշել էր կոտորել հայերին և ծրագրված ձևով պատրվակներ էր որոնում այն իրականացնելու համար: Ո՞վ էր Կարինի 1890թ. իրադարձությունների նախաձեռնողն ու իրականացնողը. իհարկե Օսմանյան իշխանությունները: Ո՞վ էր Մուսա բեյի աղմկոտ դատական ֆարսի հեղինակը. ինքը՝ Աբդուլ Համիդ 2-րդը: Ո՞վ էր համիդե հեծելազորի կազմակերպիչը և ի՞նչ նպատակով էր այն ստեղծում. ստեղծողը նույն ինքը սուլթանն էր, իսկ նպատակը՝ հայկական շրջանների հայաթափումը: Գուցե ակնարկեն նույն՝ Կ. Պոլսի Գում Գափույի 1890 թ. դեպքը: Բայց չէ որ այն խաղաղ ցույց էր, պետերբուրգյան հունվարի 9-ի նման մի բան: Խաղաղ ցուցարարները պատրիարքի հետ գնում էին սուլթանին ներկայացնելու իրենց խնդրանք-պահանջները, սակայն ոստիկանները փակեցին նրանց ճանապարհը, տեղի ունեցավ ընդհարում, և մեծ թվով մարդիկ զոհվեցին:

Ո՞վ էր Սասունի իրադարձությունների նախաձեռնողն ու իրականացնողը, ո՞վ հնարեց, թե սասունցիները ապստամբություն են բարձրացրել: Օսմանյան իշխանությունները պատրվակ էին գտել, թե սասունցիները հրաժարվում են հարկեր վճարելուց: Սասունցիները ոչ թե ապստամբեցին, այլ ինքնապաշտպանության ելան՝ յաթաղանից փրկվելու համար: Մենք պատշաճն ենք հատուցում Լեոյի վաստակին, սակայն չենք կարող չնշել նրա ոչ փոքր թվով սխալ մեկնաբանությունները թուրք-հայկական հարաբերությունների մի շարք առանցքային

խնդիրներում: «... Վերլուծելով Լեոյի ներկայացրած փաստագրությունը ներհայկական կրոնական պայքարի վերաբերյալ,- գրում է Տ.Հայրապետյանը,- դժվար է չհամաձայնվել տողատակերում ակնհայտորեն հաչքի զարնող նրա մտքին, թե հենց հայերը առաջինը թուրքերի մոտ ձևավորեցին որևէ պատճառաբանությամբ իրենց տեղահան անելու կամ զանգվածաբար կյանքից զրկելու գիտակցությունը» (էջ 25):

Հայերն ինչո՞ւ բռնագաղթվեցին ու ոչնչացվեցին: Պատճառները շատ են: Այստեղ մեծ դեր են խաղացել թե՛ ռուսական առաջխաղացումը և թե՛ հայերի ռուսական կողմնորոշումը, թե տերությունների քաղաքականությունը, թե՛ հայերի տնտեսական զորությունը Թուրքիայում, թե՛ թուրք ազգի կազմավորումը և թե՛ պանթուրքիզմն ու պանթուրանիզմը, սակայն գլխավոր պատճառը մեկն է՝ Օսմանյան կայսրությունը կործանման գործընթացում էր, և թուրքերը նրա փլատակների վրա Անատոլիայում ցանկանում էին կառուցել իրենց նոր՝ թուրքական հայրենիքը և հաստատ որոշել էին, որ Անատոլիան որևէ այլ ժողովրդի հետ չեն կիսելու: Հայերը կարող էին բնակվել ամեն տեղ, միայն ոչ Անատոլիայում: Հայ ժողովուրդը զոհն էր թուրքավարի թուրքական հայրենիք կերտելու թուրքերի ազգային պետական քաղաքականության: Եվ ծիծաղելի է մի ամբողջ ժողովրդի իր պատմական հայրենիքից արտամղելու առիթ համարել հայոց կղերականության ներքին գզվռտոցները:

Թվում է՝ ներկայացվող աշխատության հեղինակը թյուր պատկերացում ունի հայ հոգևորականության ու նրա խաղացած դերի մասին թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարում: Իհարկե, կղերականության շարքերում կային նաև Բ.Դռան գործակալներ, սուլթանամետ տարրեր և, սակայն սխալ է ասել, թե ամբողջությամբ վերցրած հայ կղերականությունը ո՛չ ցանկություն և ո՛չ էլ ընդունակություն ուներ ժամանակի պահանջներին համապատասխան «ազատագրական պայքարի մարտավարություն և ռազմավարություն մշակել»: Ովքե՞ր էին հոգևորականները: Լայն առումով՝ հայ մտավորականության ջոկատներից մեկը, ու եթե ոչ նրանք, ապա ովքե՞ր պետք է մշակեին ազատագրական պայքարի ծրագիրն ու տակտիկան: Եվ ի պատիվ հոգևորականության ստվար մասի հարկ է ասել, որ մեր ժողովրդի համար ողբերգական այդ ժամանակաշրջանում նա անձնազոհության ու նվիրվածության փայլուն օրինակ ցույց տվեց: Պատահական չէ, որ թուրք ջարդարարները հոգևորականության հետ վարվեցին առանձնակի դաժանությամբ: Անհասկանալի է նաև այն պնդումը, որ

ռուս-թուրքական երեք «պատերազմների ժամանակ հայ ժողովրդի կրած ապարդյուն կորուստների պատասխանատվության առյուծի բաժինը, անշուշտ, հայ հոգևորականության վերնախավի խղճի վրա է» (էջ 26):

Հետաքրքիր է իմանալ, թե մարդիկ, ովքեր ավելի քան մեկ հայրուրամյակ անց Ն. Վարժարպետյանի դիրքորոշման հասցեին դառը խոսքեր չեն խնայում, ի՞նչ դիրք կգրավեին, եթե ռուսական բանակն այսօր կանգնած լիներ Կ. Պոլսի պատերի տակ և գրաված լիներ Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը: Կանտեսեի՞ն, չտեսնե՞լու կտային, ի՞նչ կանեին: Որտեղից իմանար Վարժապետյանը, որ Սան-Ստեֆանոյին հաջորդելու է Բեռլինը: Չէ որ ռուսական զենքի հաղթանակը թուրքական ստրկական լծի տակ գտնվող հայի համար ոչ միայն գայթակղություն էր, այլև ազատագրվելու միակ իրական հնարավորությունը:

Շարունակենք հրապարակել Տ. Հայրապետյանի մտքերը. «... ժամանակի քաղաքական տրամաբանությունը չընկալելու տեսանկյունից հայ քաղաքական միտքը կղերականներին քիչ էր զիջում, իսկ կուսակցությունները գրեթե չէին զիջում: Հակառակ դեպքում, նախ՝ հայկական երեք կուսակցություններից երեքն էլ չէին ձևավորվի իբրև հեղափոխական շարժումներ... և երկրորդ՝ իրենց ժողովրդին խայծ չէին դարձնի այն գիշատչի համար նախատեսված թակադրում, որը նախապես դատապարտված էր...»:

Եվ ապա. «1860-96 թթ. Պոլսում, Թիֆլիսում և այլուր կազմակերպվող գաղտնի խմբակների ցանցերը, քաղաքական տեսակետից անարդյունավետ հակասուլթանական ցույցերը, Արևմտահայաստանի առանձին գավառները զինված դիմակայության դրդելը նորածին հայկական հեղափոխության մանկական հիվանդության դրսեվորումներն էին, որոնց համար 300 հազար մարդ վճարեց կյանքով, 100 հազար մարդ բռնի մահմեդականացվեց, ևս 100 հազար տարագրվեց Արևելյան Հայաստան» (էջ 28):

Այս աշխատության մեջ նման վիրավորական ձևակերպումները, հետին թվով մեղադրանքները ավելի քան շատ են: Մեր կարծիքով պատճառները երկուսն են՝ նյութի անբավարար իմացությունը և կոնստրուկտիվ դիրքորոշման բացակայությունը: Եթե միայն հեղինակը քաջածանոթ լիներ նյութին և ի վիճակի լիներ պատասխանելու միակ հարցին՝ ընդունենք, որ մեր նախնիները սխալ ու կործանարար ուղի էին ընտրել, բայց ո՞րն էր ճշմարիտ, ազգափրկիչ ուղին: Պատասխան չկա:

* * *

Նշանակալի է նույն ժողովածուի մեջ զետեղված Ռաֆֆի Հովհաննիսյանի «Հայոց մեծ եղեռնի 80-րդ տարելիցին» հոդվածը (ելույթ, որ նա կարդացել է ԱՄՆ-ում և Կանադայում):

Հեղինակը Հայաստանի երրորդ հանրապետության ծնունդը արդյունք է համարում իր ազգային շահերի համար պայքարում հայ ժողովրդի դրսևորած հաստատակամության: «Կյանքն ու ժամանակը անվերապահորեն ապացուցեցին,- գրում է նա,- թե որքան սին ու անհիմն էր մտայնությունը, թե իբր ազգային պատմությունը մոռացության մատնելով՝ կարելի է հանգուցալուծում գտնել ներկայիս խնդիրներին...

Օսմանյան կայսրության հայ ժողովրդի ցեղասպանությունը և դրան առնչվող քաղաքականությունը ազգային անվտանգության հիմնարար խնդիրներ են, ուստի կոնյուկտուրայի շահարկումների ենթակա լինել չեն կարող...

Պետականությամբ ձևավորված և արմատավորված գիտակցության բացակայությամբ միայն կարելի է բացատրել այնպիսի իրավիճակների ստեղծումը, երբ օտարները ներհայկական հարցերում դատավորի դերը ստանձնելու ամենալայն հնարավորություն են ստանում: Հայ իրականության որոշակի շրջանակներում՝ սա բավական հին և բավական տխուր ավանդույթ է դարձել...

Ի՞նչ խորհրդաստ տրամաբանություն կա նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ձեռքբերումները հարցականի տակ դնելու և պատմության բերումով աշխարհով մեկ գործող ազգային կառույցներից մեկին ահաբեկչական կազմակերպության պիտակը դրոշմելու մեջ...

Ազգային անվտանգության խնդիրներն անձնական, կլանային և կուսակցական շահերին ստորադասելը դատապարտելի ու անհնարիր երևույթ է և վաղ թե ուշ կբերի ազգային աղետի»(էջ 43):

Ապա. «Այսօրվա աշխարհաքաղաքական համատեքստում հայ ժողովրդի ազգային անվտանգությունը խարսխվում է Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Սփյուռքի անվտանգության վրա... Այս երեք ազգային հիմնասյուների շահերը տարանջատելու, առավել ևս հակադրելու ցանկացած փորձ կնշանակի վտանգի ենթարկել հայկական պետականության և ողջ հայ ժողովրդի ապագան...

Ինքնահաստատման մրցավազքում հայ քաղաքական-հասարակական ընտրախավը մոռացության է մատնել շարքային հային՝ շինակա-

նից սկսած մինչև գիտության երախտավորը: Հայ մարդը մի տեսակ լքված է և անպաշտպան... Բայց չէ որ հոգատարությունն անհատի կարիքների նկատմամբ. նրա մարդավայել ապրելու և բարոյահոգեբանական բնականոն վիճակը պահպանելու խնդիրը ազգային անվտանգության համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից է...: Ազգային անվտանգության անկյունաքարը ազգային համերաշխությունն է...:

Հայ քաղաքական-հասարակական կազմակերպությունների, մամուլի և լրատվության կառույցների ինքնարտահայտման և ինքնադրսևորման ցանկացած սահմանափակում, ժողովրդավարական սկզբունքների ցանկացած խախտում ուղղված է ընդդեմ ազգային համերաշխության, ուստի վտանգում է ազգային անվտանգությունը» (էջ 45):

Լավ հասկանալով, որ Ռ.Հովհաննիսյանի այս նյութը հրապարակային ելույթի համար է և հետևաբար պարունակում է մի քանի ակնհայտ պոպուլիստական հարցադրումներ ու մեկնաբանություններ, սակայն նկատի ունենալով, որ այն զետեղված է ներկայացվող ժողովածուում, հարկ ենք համարում հպանցիկ անդրադառնալու հետևյալին:

«... Առ այսօր դեռ չի ձևավորվել,- գրում է նա,- ավարտուն տեսք ու բովանդակություն ունեցող ընդհանուր ձևակերպում չի ստացել պատմության կարևորագույն և առանցքային փուլերի,իրադարձությունների վերաբերյալ գնահատականների, մոտեցումների այն համակարգը, որն անվերապահորեն ընդունելի կլիներ ողջ հայ հավաքականության համար» (էջ 38):

Ընդհանուր առմամբ միանգամայն ճիշտ հարցադրում է: Սակայն, ամենևին էլ պարտադիր չէ որ «գնահատականների, մոտեցումների այդ համակարգը անվերապահորեն ընդունելի» լինի «ողջ հայ հավաքականության համար»: Մեզանում դժբախտաբար շատ է պարզունակեցվում «մեկ ազգ, մեկ ժողովուրդ» հասկացությունը. միայն հայ էթնոսին պատկանելու փաստը ամենևին էլ բավարար չէ նույնիսկ համազգային խոշոր նշանակության խնդիրներում անվերապահ համաձայնության հասնելու համար: Մարդկանց մտածողության համակարգը, մոտեցումները ձևավորվում են ոչ միայն և դժբախտաբար՝ ոչ այնքան ազգի, նրա շահերի թելադրանքով, որքան սոցիալական վիճակով ու առօրեական շահերով: Եվ դա ամենևին էլ զուտ հայկական երևույթ չէ: Ըստ այդմ էլ, եթե մինչև օրս Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանն առընչվող առանցքային մի շարք խնդիրներ՝ «հայ ամբողջ հավաքականությանն» ընդունելի լուծում չեն ստացել, հետևանք է ոչ միայն գոյություն

ունեցող ոչ բարենպաստ պայմանների, այլև այդ խնդիրներին հայ հավաքականության տարբեր հատվածների իրարամերժ մոտեցումների:

Ըստ իս սահմանելով ազգային անվտանգության հիմնահարցը, առանցքային տեղը պետք է հատկացվի Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովմանը, քանի որ նա է ամբողջ հայ ժողովրդի ողնաշարը, ազգային բոլոր հատվածների հարատևման հիմքն ու գրավականը:

* * *

Ժողովածուի չորրորդ ուսումնասիրությունը պատկանում է Էմմա Բեգիջանյանի գրչին և վերնագրված է «Համաթուրքականության գաղափարախոսության ուղղվածությունը և հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում»: Այն պանթուրքիզմի ծագման, էվոլյուցիայի և պաշտոնական գաղափարախոսության ու քաղաքականության վերածվելու վերաբերյալ ուշագրավ հետազոտություն է, պարունակում է մի քանի թարմ հարցադրումներ և գիտական շրջանառության մեջ է դնում մեզանում անհայտ կամ քիչ հայտնի որոշ հրատարակություններ ու աղբյուրագիտական նյութեր: Մասնավորապես՝ հետաքրքիր է պանօսմանիզմից թուրքիզմին անցնելու գործընթացի վերլուծությունը:

Համաթուրքականությունը ծնվեց որպես Ռուսաստանի թուրքական ժողովուրդների էթնիկական ռեակցիա ցարիզմի վարած ռուսականացման ու ազգային ճնշումների դեմ: Համաթուրքականության հիմնադիր Ը.Կասպիրինսկու ու նրա հիմնադրած «Թերջուման» պարբերականի գործունեության մեջ նման կողմնորոշումն ակնհայտ է:

Սակայն շատ արագ այդ նոր տեսությունը գրավեց Արևմուտքի, մասնավորապես Անգլիայի դիվանագիտության ուշադրությունը՝ որպես Կենտրոնական և Արևելյան Ասիայում ռուս-անգլիական մրցակցությունում Ռուսաստանի դեմ պայքարի միջոց: Պատահական չէ, որ Կասպիրինսկու առաջ քաշած մտքերն իսկույն արձագանք գտան Լոնդոնում, և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության երկու աշխատակիցներ՝ ծագումով հունգարացի Արմինիուս Վամբերին և Դենիս Ռասը նվիրվեցին պանթուրքականության գաղափարախոսության մշակմանը: Ուստի պատահական չէ նաև, որ այդ պատճառով համաթուրքականությունը կրեց Ռուսաստանի դեմ ուղղված տեսության բնույթ և այդպիսին մնում է մինչև օրս:

Է. Բեգիջանյանը միանգամայն իրավացի է, երբ գրում է. «Թեև 1900 թ. համաթուրքականությունը Ռուսաստանում արդեն վերջնականապես

ձևավորված դոկտրին էր, բայց բուն Թուրքիայում սկզբնական շրջանում ոչ միայն այդ գաղափարախոսությունն ընդունելություն չգտավ, այլև մերժվեց» (էջ 47-48):

Թուրքիայում թուրքերը երկար ժամանակ համառորեն մերժում էին համաթուրքականության գաղափարը և միայն 1912-13 թվականներին, մի կողմից՝ բալկանյան պատերազմներում խայտառակ պարտությունը, իսկ մյուս կողմից՝ միջազգային հարաբերությունների աննախադեպ սրման և տերությունների խմբավորումների միջև սպասվող բախման հետևանքների ու ընձեռած հնարավորությունների կանխատեսումը երիտթուրքերին նետեց պանթուրքիզմի գիրկը:

Մինչ այդ իթթիհատականները տատանվում էին պանիսլամիզմի, պանթուրանիզմի ու թուրքիզմի միջև: 1909 թ. Կիլիկիայի ջարդերը նրանց մոտեցրեց թուրքիզմին: Նազիմը գրեց. «Մեր երկիրը պետք է թուրքաբնակ լինի, քանզի ոչ թուրք ազգաբնակչության առկայությունը արտաքին ուժերին առիթ է տալիս միջամտել մեր երկրի ներքին գործերին: Մենք պետք է ոչ թուրք բնակչությանը բռնի թուրքացնենք» (Զարեվանդ, Անկախ և միացյալ Թուրանիա):

Այնպես որ երկար ժամանակ մեծ ջանքեր պահանջվեց, որպեսզի այդ ուսմունքը բնակություն հաստատեր նաև Բոսֆորի ափերին:

«Բալկանյան պատերազմները,- գրում է հեղինակը,- երիտթուրքերի համար բեկումնային նշանակություն ունեցան և՛ համաթուրքական գաղափարախոսությանը վերջնականապես տրվելու տեսանկյունից, և՛ այն առումով, որ Թուրքիան, իրեն համարելով ասիական պետություն, երես շրջեց Եվրոպայից:

Այդ ժամանակ թուրքերը հրաժարվեցին նաև համաիսլամականությունից: Շեշտը դնելով թուրքական ծագման վրա, նրանք արդեն ընդգծում էին, որ իսլամը չպետք է խառնել թուրքականության հետ: Ուշադրության կենտրոնում պետք է լինի թուրքական տարրը միայն, իսկ ոչ թուրք ազգերը չպետք է գոյատևեն ինքնավարության կամ որևէ հատուկ կարգավիճակով: Նրանց նման իրավունք չի վերապահվում, նրանք կամ պետք է թուրքացվեն, կամ ոչնչացվեն, երևույթ, որը Գյոքալփն անվանում էր «տունը մաքրել» (էջ 51):

1913 թ. Բայազետում կայացած համաթուրքականների (պանթուրքիստների) համագումարում որոշվեց «միավորել թուրք ազգի երկու՝ արևելյան և արևմտյան հատվածները» (Փոքր Ասիան և Անդրկովկասը): Այս հարցի շուրջ նույնիսկ պայմանավորվածություն էր ձեռք բերվել էն-

վեր Փաշայի և Ռուսաստանից ժամանած պատվիրակության միջև: Արևմտյան և Արևելյան Հայաստանը շրջանցելով՝ «թուրք ազգի երկու հատվածները» միավորելու այս ծրագիրը գործադրելու խնդրում պան-թուրքիստները շատ ավելի կրքոտություն դրսևորեցին, երբ գործի դրվեց Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու 1914 թ. փետրվարին ստորագրված ծրագիրը:

Հեղինակը ճիշտ է նկատում, երիտթուրքերն անտարբերություն էին դրսևորում Եվրոպայում կայսրության տարածքների կորուստների նկատմամբ, և այդ բացատրվում է նրանց արևելյան՝ համաթուրանական նկրտումներով: Թվում է՝ այս խնդրում գլխավոր դերը խաղացել է այն իրողությունը, որ Թուրքիան այլևս անզոր էր Եվրոպայում եղած այդ տարածքներն իր գերիշխանության տակ պահել: Ի դեպ, այդ կողմնորոշման առաջնեկը ոչ թե երիտթուրքերն էին, այլ Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանը: Մեծ մարդասպանը համոզված էր, որ մերձավոր ապագայում Թուրքիան հեռանալու է Եվրոպայից ու ամփոփվելու է Անատոլիայում և դրա համար ոչ միայն բացարձակապես չէր զղջում, այլ, ընդհակառակը, գոհունակություն էր արտահայտում, գտնելով, որ միայն Անատոլիայում կենտրոնանալը կապահովի թուրք ժողովրդի ու նրա պետականության ապագան:

Է.Բեգիջանյանն անդրադառնում է նաև Սան-Ստեֆանոյի պայմանագրին և, ըստ իս, ի տարբերություն Տ. Հայրապետյանի, ճշմարիտ գնահատական է տալիս Սան-Ստեֆանո-Բեռլին գործընթացին:

«... Մեծ Բրիտանիայի գործադրած ջանքերի շնորհիվ,- գրում է նա,- եվրոպական պետությունները Սան-Ստեֆանոյի պայմանագիրը դիտեցին իբրև Ռուսական կայսրության սահմանների ընդլայնումը հաստատող փաստաթուղթ և Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության վիճակի բարելավման օգտին կատարված քայլ...: Մինչ Բեռլինը պատրաստվում էր համաժողովի, Մեծ Բրիտանիան գաղտնի բանակցություններ սկսեց Բ.Դռան հետ, որոնց արդյունքում երկու երկրների միջև ստորագրվեց «պաշտպանության պայմանագիր... Այդ պայմանագրով Կիպրոսը հանձնվում էր Բրիտանիային, որն իր հերթին պարտավորվում էր. «Եթե Ռուսաստանը դուրս չգա Բաթումից, Կարսից և Արդահանից, կամ փորձի գրավել Օսմանյան կայսրության այլ տարածքներ, Մեծ Բրիտանիան պատերազմի մեջ կմտնի հօգուտ Թուրքիայի» (էջ 53):

Հեղինակը պատմագրության մեջ շատ տարածված կարծիքի կողմ-

նակից է նաև հետևյալ հարցում. «Օսմանյան կայսրությունը մեկը մյուսի հետևից տարածքներ էր կորցնում, և Հայկական հարցի առկայությամբ չէր բացառվում նաև Անատոլիայի կորուստը: Իսկ Օսմանյան կայսրության կենտրոնում գտնվող այդ տարածքը թուրքերը համարում էին իրենց բնօրրանը և միանգամայն այլ վերաբերմունք ունեին դրա նկատմամբ: Ուստի, նման մտայնությունից ելնելով և հաշվի առնելով, որ 80-ական թվականներին հայրենիքից դուրս ստեղծվել էին հայկական քաղաքական կուսակցություններ, և ինքնապաշտպանության հարցը հանձինս ֆիդայական շարժման լուրջ բնույթ էր կրում, բարձր Դուռը որոշեց յուրովի լուծել Հայկական հարցը՝ «Հայաստանը առանց հայերի»: Եվ սուլթան Աբդուլ Համիդը եվրոպական պետությունների դեսպանների ու հյուպատոսների աչքի առջև սկսեց կազմակերպել հայերի զարհուրելի ջարդեր ոչ միայն բուն Արևմտյան Հայաստանում, այլև ողջ՝ Օսմանյան կայսրության տարածքում: Բողոքի ցանկացած ելույթ ավելի էր գազազեցնում դահիճներին» (էջ 54-55):

Երեք դիտողություն:

Հայկական հարցի առկայությունը չէր բացառում ոչ թե Անատոլիայի, այլ միայն նրա արևելյան հատվածի՝ այսինքն Արևմտյան Հայաստանի կորուստը, քանի որ Արևմտյան Հայաստանը գտնվում էր ոչ թե օսմանյան կայսրության կենտրոնում, այլ նրա ծայրագույն արևելքում:

Կրկնում եմ, հայերին կոտորելու Աբդուլ Համիդի քաղաքականությունը ելնում էր ոչ թե հայերի ընբոստ վարքագիծից, նրանց ընկճելու ձգտումից, այլ տասնամյակների ընթացքում (սկսած Ֆուադ փաշայի կտակից՝ 1860-ական թվականներ) մշակված (Քյամիլ փաշայի նամակը սուլթանին, Սայիդ փաշայի ձևակերպած և Աբդուլ Համիդ 2-րդի կողմից խմբագրված «Հայկական հարցը լուծելու համար պետք է ոչնչացնել հայերին» կարգախոսը) թուրքական ազգային պետական քաղաքականությունից: Այդ քաղաքականության ձևավորման շրջանում հայդուկային խմբեր և ինքնապաշտպանական կռիվներ չկային: Հարկ է ճշգրտել նաև հեղինակի ձևակերպումը. «Հայերն իրենց վիճակի բարելավումը կապում էին երիտթուրքերի իշխանության հետ և, կարելի է ասել, վեց տարի շարունակ, հավատալով պաշտոնական հայտարարություններին, աջակցում էին նրանց: Դրա վկայությունն է այն փաստը, որ հայ պատգամավորները մինչև 1915 թ. սկիզբը դեռ շարունակում էին իրենց գործունեությունը խորհրդարանում: Իսկ ռազմաճակատում հայերը քաջաբար կռվում էին թուրք զինվորների հետ կողք-կողքի» (էջ 55):

Որ հայերը, գրեթե բոլոր հայ քաղաքական կուսակցությունները, երիտթուրքական շարժման ձևավորման շրջանից սկսած ձգտում էին համագործակցել իթթիհատի հետ, իրողություն է և միանգամայն հասկանալի: Հենց միայն այն փաստը, որ թուրք հասարակության մեջ ձևավորվում էր քաղաքական ուժ, որը նպատակ ուներ կործանել Աբդուլ Համիդի դաժան լուծը, բավական էր, որ հայերին մոտեցներ իթթիհատականներին, էլ չենք ասում եղբայրության, ազատության և հավասարության վերաբերյալ երիտթուրքական կարգախոսների մասին: Սակայն այդ համազգային հրապուրանքը երկար չտևեց: Հնչակյան կուսակցությունը, որը միշտ էլ վերապահումներ էր վերաբերվում երիտթուրքերին, կապերը խզեց նրա հետ: Համագործակցությունը շարունակեց ՀՅ դաշնակցությունը, սակայն այն գործնականում տևեց մինչև 1914 թ. կեսերը՝ կուսակցության էրզրումի ընդհանուր ժողովը, երբ վճռականորեն մերժվեց երիտթուրք կառավարության պահանջը՝ պատերազմում բռնել Թուրքիայի կողմը և քայքայիչ գործունեություն ծավալել ռուսական բանակի թիկունքում:

Այս խնդրին անդրադառնում եմ նկատի ունենալով այն, որ պատմագրության մեջ տարածում ունի բացարձակապես սխալ մի մոտեցում: Ըստ որոշ պատմաբանների՝ իրար դեմ կանգնած էին երկու ժողովուրդներ՝ հայերը և թուրքերը, իրենց ամբողջական ազգային ծրագրերով կամ դիրքորոշումներով: Սխալ է. հայ կյանքում համազգային դիրքորոշում և գործունեության համընդգրկուն ծրագիր գոյություն չունի: Ամեն մի քաղաքական կուսակցություն, հասարակական-քաղաքական, հայդուկային շարժում, իր ուրույն մոտեցումներն ուներ նույնիսկ ամենաառանցքային հարցերում: Եթե հնչակյան կուսակցության ծրագրային նպատակը համազգային զինված պայքարի միջոցով թուրքական լծի տապալումն ու Հայաստանի անկախությունն էր, ապա ՀՅ դաշնակցությունն անկախության հարց առաջ չէր քաշում, եթե պոլսահայ առաջնորդների գործունեության հիմքում ընկած էր Արևմտյան Հայաստանում՝ բարեփոխումների անցկացումը, ապա հայդուկները լոկ ինքնապաշտպանական կռիվներ էին մղում:

Հավանաբար ճշգրտելու կարիք ունի նաև հեղինակի հետևյալ ձևակերպումը. երիտթուրքերը «իրենց համաթուրքական նկրտումները բարձրացնելով ազգային իդեալի մակարդակի... որոշեցին միանգամայն վնասազերծել սեպի պես «թուրքական աշխարհի» մեջ խրված և նրան երկու մասի բաժանող Հայաստանը, բնաջնջել հայերին» (էջ 55):

Այստեղ «վնասազերծել» բառը երկիմաստ կարող է ընկալվել: Բանը հայերին վնասազերծելը չէր, այլ նրանց հայրենիքը սեփականացնելը, իրենցը դարձնելը: Եվ Աբդուլ Համիդը, և երիտթուրք լիդերները, անկախ նրանց հայտարարություններից, քաջ գիտեին, որ օսմանյան հպատակ ժողովուրդներից հայերն ամենից ավելի օսմանահպատակ հոգեբանություն ունեին և կայսրության ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական-մշակութային զարգացմանը իրենց նպաստը բերելու գործում ամենապատրաստակամ ժողովուրդն էին: Բավական էր հայերի վիճակի թեկուզ որոշ բարելավում, ռայայի կիսաստրկական վիճակից դուրս գալու հնարավորություն, որպեսզի նրանք հետ կանգնեին պայքարից, քանի որ այլ ելք չունեին: Նրանց վիճակը դրախտային չէր նաև Ռուսաստանի կազմում: Բայց օսմանյան տիրակալները հայերին այդպես էլ ընդառաջ չգնացին և գնալ չէին կարող, քանի որ դա հակասում էր նրանց աշխարհընկալմանն ու պետական նկրտումներին: Նրանք ձգտում էին ազատվել ոչ թե հայկական շարժումներից և դրանցից բխող վտանգներից, այլ հայ ժողովրդից, Հայաստան և հայ անուններից: Նրանց Եփրատի, Տիգրիսի և Արաքսի հովիտները, Տավրոսյան լեռնաշխարհի փեշերը պետք էին ոչ թե Հայաստան, այլ Արևելյան Անատոլիա՝ Թուրքիա, թուրքերի հայրենիք անունով:

Հայերի ցեղասպանության գործում միջազգային սիոնիզմի խաղացած դերի հարցը դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունի, և հազիվ թե ճիշտ է, նկատի ունենալով առանձին փաստեր ու վկայություններ, հրեաներին դասել «ցեղասպանության ծրագրի իրագործմանն իրենց անմիջական մասնակցությունը» բերողների շարքին:

Ներկայացվող ժողովածուում տարբեր հեղինակներ անդրադառնում են Հայոց ցեղասպանության և ֆաշիստների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հրեաների ողջակիզման միջև զուգահեռներին: Բեգիջանյանը բերում է պարսիկ հետազոտող է. Ռայինի խոսքերն այն մասին, որ «Օսմանյան կայսրության հայերը Գերմանիայի ապագա ծրագրերի համար «փորձաճագարների և սպիտակ մկների» դեր կատարեցին» (էջ 56): Պարսիկ գիտնականը չափազանցնում է, եթե չասենք, որ նման ձևակերպումը իրականության հետ լոկ շատ հեռավոր ու ոչ անմիջական կապ ունի:

Չափազանցության որոշակի չափաբաժին ունի վերջին տարիներին պատմագրության մեջ տարածում գտած այն «աքսիոման», ըստ որի, եթե հայերի ցեղասպանության հանցագործները պատժվեին, հրեաների

ցեղասպանությունը տեղի չէր ունենա: Այս հարցում Ռայինն ավելի ճիշտ ձևակերպում է առաջարկում՝ հայերի ցեղասպանության կազմակերպիչների անպատիժ մնալը ֆաշիստների կողմից հրեաների ցեղասպանությունը կազմակերպելու նպաստավոր նախապայմանն էր:

Միանգամայն իրավացի է է. Բեգիջանյանը, երբ չի համաձայնվում Ռայինի հետևյալ երկու կարծիքների հետ. «Օսմանյան Թուրքիան հայերի ցեղասպանությունը կազմակերպելու համար պատժվել է կայսրության փլուզումով» և«դրական գնահատելով Աբաթուրքի հիմնադրած ազգային ժողովրդավարական Թուրքիայի Հանրապետությունը, նա [Ռայինը] որևէ ընդհանուր բան չի տեսնում դրա և Օսմանյան կայսրության միջև»: Իրողությունն այն է, որ «Թուրքիայի Հանրապետությունը հենց Օսմանյան Թուրքիայի երիտթուրքական քաղաքականության շարունակողն է՝ առանձնապես Հայկական հարցում» (էջ 57): Սակայն տեղին ու ճիշտ համարել չի կարելի այն պնդումը, թե «քեմալական ազգային շարժման քաղաքական ուղղվածությունը ոչ այլ ինչ էր, քան «Միություն և առաջադիմություն» կուսակցության համաթուրքական քաղաքականության նոր դրսևորում՝ միջազգային նոր պայմաններին համապատասխան»: Գուցե և քեմալականները ապագայի համար ինչ-որ համաթուրանական ու համաթուրքական ծրագրեր ունեցել են, սակայն նրանց քաղաքականության գերխնդիրը թուրքիզմի նպատակադրումների իրականացումն էր, այսինքն՝ թուրքական Թուրքիայի ստեղծումը: Մ.Քեմալը «թուրքական աշխարհի» միասնականության ապահովման գործնական քաղաքականության ծրագիր չի առաջադրել: Ինչ վերաբերում է նրա անասնական ատելությանը Միացյալ Հայաստանի գաղափարի հանդեպ, ապա դա ավելի քան հասկանալի է. Միացյալ Հայաստան և քեմալական Թուրքիա հասկացությունները իրարամերժ, մեկը մյուսին բացառող հասկացություններ էին: Եվ այն, որ ինքը՝ Մուստաֆա Քեմալը, սերում էր երիտթուրքական միջավայրից, բավարար չէ համոզելու, թե «Ազգային (քեմալական) շարժման և «Միություն և առաջադիմություն» կուսակցության ծրագրերն ու գաղափարները նույնն են»: Մենք բավարար հիմքեր չունենք նաև պնդելու, թե Աբաթուրքը նպատակ ուներ «ոչնչացնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը և, այդպիսով, իրագործել համաթուրքականների վաղեմի երազանքը» (էջ 59): Հավանաբար ոչ միայն Քեմալը, այլև միլիոնավոր թուրքեր երազել ու այսօր էլ երազում են «Մեծ ու անծայրածիր Թուրան» ստեղծելու մասին, բայց, երբ խոսքը գնում է Քեմալ Աբաթուրքի մասին՝ որպես քա-

ղաքական գործչի ու պետական ծրագրեր իրականացնողի, ապա հիմքեր չունենք նրան համաթուրանական ծրագրեր վերագրել: Հայաստանի հարցում Մ. Քեմալը հետևորդն էր ոչ թե իթթիհատականների, այլ Աբդուլ Համիդ 2-րդ սուլթանի: Նրանք երկուսն էլ դեմ չէին, որ Արաքսից դեպի արևելք փոքրիկ և թույլ Հայաստան գոյություն ունենար, նախ՝ որպես բուֆեր Թուրքիայի ու Ռուսաստանի միջև, ապա՝ Հայաստանի գոյության վկայություն և Թուրքիայի տարածքում նոր Հայաստան ստեղծելու պահանջները մերժելու պատրվակ:

Մի հարց կա: Ժողովածույում զետեղված աշխատությունների զգալի մասում շոշափվում է, մեծ մասամբ նաև անպատեհ, Միացյալ նահանգների դերն ու դիրքորոշումը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության խնդիրներում: Գրեթե միահամուռ գերագնահատվում և վարդագույն են ներկայացվում դրանք: Ինչպես մյուս տերությունների, այնպես էլ ԱՄՆ-ի դիրքորոշումը քննարկվող հարցերում, նպատակադրումների առումով, թե՛ XX դարի ակզբներին և թե՛ հետագա տարիներին նույնն են, ինչ մյուս տերություններինը՝ աշխարհաքաղաքական շահադիտություն, անվերջ շահարկումներ, անամոթ երկերեսանիություն, իսկ որոշ դեպքերում՝ նաև դավաճանություն: Դրա վառ ապացույցներն են թե՛ Հայաստանի մանդատի հետ կապված զավեշտական թատերախաղերը և թե՛ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցը նախագահական ընտրությունների պահանջներին ենթարկելու ուղղությամբ ԱՄՆ-ի նախագահների ու նախագահության թեկնածուների վերջին 30 տարվա անպարկեշտ վարքագիծը:

* * *

Ժողովածույում զետեղված ամենահաջող ուսումնասիրություններից մեկը Հակոբ Չաքրյանի **«Շրջադարձ Հայկական հարցից հայերի ցեղասպանության Մեծ եղեռնի խնդրի շահարկման սկիզբը դրվեց Լոզանում»** աշխատությունն է:

«Օսմանյան կայսրությունն անդամահատելու հարցում,- գրում է հեղինակը,- մեծ տերությունները ընդհանուր առմամբ համամիտ էին: Քանի որ նրանք կայսրության ներքին գործերին միջամտում էին ազգային հարցի սրման միջոցով, ուստի ընդհանուր էր նաև ազգային-ազատագրական շարժումները խթանելու նրանց շահագրգռությունը: Սակայն, երբ օրակարգ էր մտնում ոչ թե թուրք ժողովուրդների տարածքից թուրքերի դուրս մղումը, ընդհանուր շահագրգռությունը փոխարինվում էր

համընդհանուր մրցակցությամբ, և ազգային հարցն ինքնաբերաբար դառնում էր միջազգային շահարկումների առարկա: Թերևս դա առավելագույնս դրսևորվեց Հայկական հարցի պարագայում, և Արևմտահայաստանը հայտնվեց «օսմանյան ժառանգության» համար մեծ տերությունների մրցապայքարի կիզակետում:

Արևմտահայության կենսական շահերը թուրքական բռնատիրության պայմաններում պահանջում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու առիթներ չտալ եվրոպական դիվանագիտությանը և Հայկական հարցը դուրս բերել միջազգային շահարկման ոլորտից: Թեևս դրանով հնարավոր լիներ փոքրիշատե խուսափել պարբերաբար կրկնվող կոտորածներից, գուցե և համապատասխան նախադրյալներ ստեղծվեին անվտանգության ինքնուրույն ուղիների որոնման համար» (էջ 63-64):

Ըստ իս միանգամայն ճիշտ ձևակերպումներ են: Միայն երկու վերապահում: Ի տարբերություն Անգլիայի և Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիան և, մասնավորապես, Ռուսաստանը, իրենց միապետական բնույթով հանդերձ, ազգային ազատագրական շարժումների հարցում ավելի զուսպ էին, բայց միայն զուսպ, ոչ թե ձեռնպահ:

Սակայն գլխավորն այդ չէ, այլ այն, թե ինչպես էր հնարավոր «Հայկական հարցը դուրս բերել միջազգային շահարկման ոլորտից»: Թվում է, թե այդ անելու միայն մի ուղի կար՝ դադարեցնել պայքարը վայրագ բռնությունների, ստրկական շահագործման և ազգային անլուր հալածանքների դեմ: Սակայն ընդունենք, որ XIX դարի երկրորդ կեսերին այդ անել հնարավոր չէր: Ինչպես Ռաֆֆին է գրում, լինում են վիճակներ, երբ զենքը ձեռքին մեռնելը շատ ավելի գերադասելի է, քան գոյություն ունեցող պայմաններում գոյատևելը: Այդ կողմնորոշումը քաղաքական հասունությունից կամ անելիքի հստակ գիտակցումից կախված չէր: Հայը դարավոր նիրհից արթնացել էր և այլևս տանել չէր կարողանում օրեցօր սաստկացող թուրքական բռնությունները:

«Հայ քաղաքական միտքը մոլորության մեջ էր: Նրա հասունության մակարդակը չէր համապատասխանում այդպիսի ուղիների որոնման պահանջին», սակայն կարծում ենք, որ այդ մոլորության գլխավոր պատճառը ոչ այնքան հասունության ցածր մակարդակն էր, որքան, իրոք, անելանելի կացությունը: Նույնիսկ այսօր մենք ի վիճակի չենք պատասխանելու այդ ճակատագրական հարցին՝ ո՞րն էր ելքը:

Հեղինակը արդարացի չէ, երբ գրում է, թե հայ քաղաքական միտքը

«զուրկ է անգամ կոտորածների շարժառիթն ըմբռնելու կարողությունից»: Ըմբռնելու այդ անկարողության հետևանքով «մեծ տերությունների հավաստիացումները դրվեցին արևմտահայերի անվտանգության հիմքում... Յուրաքանչյուր կոտորածից հետո ավելի ամուր կառչելով այդ [մեծ տերությունների] ողորմածությունից, հայ հասարակաքաղաքական շրջանակները տուրք տվեցին մեծ տերությունների քմահաճույքին, գրգռելով Բ.Դռան զայրույթը, հակազդեցության համապատասխան հետևանքներով» (էջ 64): Կրկնում ենք, կոտորածները հայերի գործողությունների հակազդեցություն համարելը կոպիտ սխալ է: Ընդհակառակը, հայերի գործողություններն էին օսմանյան ջարդարարությանը հակազդելու միջոցներ: Հնարավոր է, այդ միջոցները ոչ միշտ էին ճիշտ ընտրվում, ծայրահեղ ու վտանգավոր քայլեր էին կատարվում, սակայն այդ ամենը մեկ գերխնդիր ուներ՝ հայի կյանքը, պատիվը և ունեցվածքը պաշտպանել օսմանյան իշխանությունների և վաչկատուն ցեղերի նորանոր ոտնձգություններից:

Ինքը՝ հեղինակն է գրում, որ տերությունների «միջև ծավալվող կատաղի մրցապայքարը, որը խորքում մերժում էր որևէ առանձին պետության տիրապետող դիրքը Օսմանյան կայսրության նկատմամբ [և այդ, այլ ոչ թե Ռուսաստանի հովանավորությունը հանդիսացավ կայսրության գոյության պաշտպանության հիմքը], գերազանցեց բոլոր ենթադրությունները: Հենց Բեռլինի կոնգրեսում ակնհայտ դրսևորվեցին եվրոպական տերությունների շահերի ու արևմտահայերի ձգտումների հակադրությունները» (էջ 64):

Հեղինակը միանգամայն ճիշտ է նկատել, որ մինչև 80-ական թվականները հայանպաստ գործողությունների կրողը ոչ թե Արևմուտքի տերություններն էին, այլ Ռուսաստանը: Եվ հայերի դժբախտության պատճառներից մեկն այն էր, որ Բեռլինում Բ.Դուռը «առավելագույնս օգտվեց եվրոպական տերությունների ու Ռուսաստանի հակասություններից: Դրանց շնորհիվ նա ոչ միայն կարողացավ կասեցնել հայկական վիլայեթներում նախատեսվող բարեփոխումների ծրագրի իրագործումը, այլև մարտահրավեր նետեց Բեռլինի տրակտատի հեղինակներին»:

Թվում է՝ զգուշությամբ պետք է օգտագործել նաև «օսմանյան լուծը ռուսական զենքի օգնությամբ թոթափելու հայերի ձգտումը» արտահայտությունը, քանի որ նախ՝ Ղրիմի պատերազմից մինչև Առաջին աշխարհամարտն ընկած ժամանակահատվածում ռուսական բանակին հրավիրելու լուրջ փաստեր արձանագրված չեն և երկրորդ՝ ռուսական

զենքի օգնությամբ ազատագրվելու կողմնակից էին ոչ բոլոր հասարակական հոսանքները: Եվ, որ օսմանյան իշխանությունները հայերին համարում էին «Ռուսաստանին տարածքաշրջան հրավիրող ռազմաքաղաքական գործոն», միայն մասամբ է իրականությանը համապատասխանում: Այն միտումնավոր ձևով ուռճացվում, համահայկական դավանանք էր ներկայացվում նորից ու նորից ջարդարարական նկատառումներով:

Իհարկե, արևմտահայերը ռուսական կողմնորոշում ունեին, սակայն այդ կողմնորոշման բովանդակությունը միանշանակ չէր: Որոշ հասարակական խմբեր իրոք ձգտում էին, որպեսզի Ռուսաստանը նվաճեր Արևմտյան Հայաստանը: Մյուսները հակված էին ռուսական զենքի օգնությամբ անկախություն ձեռք բերել: Երրորդների համար ռուսական զենքը և, ընդհանուր առմամբ, Ռուսաստանը լոկ երաշխիք էին Օսմանյան կայսրության կազմում հայերի վիճակը բարվոքելու համար:

Եվ, որ ռուս-թուրքական յուրաքանչյուր պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում հայերի թիվն ավելի ու ավելի նվազում էր, այդ հետևանք էր ոչ թե կամ ոչ այնքան նման իրավիճակներում հայերի ակտիվության, այլ այն բանի, որ ամեն մի պատերազմ թուրքական իշխանությունների համար հնարավորություն էր հայերին կոտորելու կամ արտամղելու: Այսինքն՝ փոքր ծավալներով կատարվում էր այն, ինչ արվեց Առաջին աշխարհամարտի տարիներին:

«Առաջին համաշխարհային պատերազմը,- գրում է Հ. Չաքրյանը,- հստակ սահմանագիծ անցկացրեց Օսմանյան կայսրությունում ազգային հարցի շահարկումների ու դրա լուծման հնարավորությունների միջև: Հայկական հարցի պարագայում հաղթանակեց բնաջնջման տարբերակը» (էջ 66): Եթե ուզում ենք հավատարիմ լինել պատմական ճշմարտությանը, ապա պարտավոր ենք ասել, որ հայերի բնաջնջման տարբերակը հաղթանակեց ոչ թե պատերազմի տարիներին, այլ մինչև պատերազմը: Այդ վճռին հանգելու համար պահանջվեց տարիներ, սկսած 1909 թվականից:

Խոսելով Հայկական հարցի ետպատերազմյան անդրադարձների մասին, հեղինակը իրավացիորեն նկատում է. «Մեծ Հայաստանի ճակատագիրը կանխորոշված էր ոչ թե անկախության պատերազմում քեմալականների հաղթանակով, այլ հոգևվարքի մեջ գտնվող Օսմանյան կայսրությանը Սևրը որպես հաշտության պայմանագիր պարտադրողների քաղաքական նուրբ հաշվարկներով: Ի դեպ, հեռանկարային այդ

հաշվարկները ուղղակիորեն հենվում էին քեմալականների հնարավոր հաղթանակի վրա: Մասնատման սպառնալիքի տակ պահելով կայսրության բուն տարածքները Փոքր Ասիայում, արևմտյան տերությունները պարզապես զսպաշապիկ էին քեմալականներին, որպեսզի նրանց մեջ ապագա Թուրքիայի քարտեզն ընդարձակելու մտքեր հանկարծ չառաջանան: Հիրավի, Սևրի պայմանագիրը քեմալականներին թույլ չտվեց գայթակղվել Մոսուլով: Սակայն, փոխարենը՝ նպաստեց բոլշևիկների հետ վերջիններիս փոխհարաբերությունների աննախադեպ բարելավմանը՝ ճանապարհ հարթելով երկուստեք շահավետ գործարքների համար: Այլ կերպ ասած՝ քեմալականները շահեցին անգամ Սևրի պայմանագրում...»:

Հետադարձ հայացք գցելով 1918-1920 թթ. ռազմաքաղաքական իրադարձություններին, հնարավոր չէ չնկատել դրանց խիստ վտանգավոր ընթացքը Հայաստանի համար: Թերևս դրա հիմքում ընկած էր Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանի դեմ հենակետի վերածելու արևմտյան տերությունների ձգտումները և բոլշևիկների հակազդեցության գործողությունները: Շուտով այդ գործողություններին սկսեց անմիջական մասնակցություն ցուցաբերել քեմալական Թուրքիան:

Հայաստանն ակամա հայտնվեց ուժային երեք կենտրոնների շահերի բախման կիզակետում: Ստեղծված իրավիճակը նրան կանգնեցրեց քաղաքական կողմնորոշումը վերանայելու խնդրի առջև (էջ 68): Խոսքը ՀՀ Դաշնակցության կոպիտ սխալի՝ արևմտյան կողմնորոշման վերանայման մասին է: Այս ընթացքում ՀՀ կառավարությունն իսկապես մի քանի լուրջ սխալներ թույլ տվեց, որոնք ողբերգական հետևանքներ ունեցան մեր երկրի ոչ միայն ռազմաքաղաքական վիճակի, այլև նրա սահմանների որոշման համար: Մենք չպետք է թաքցնենք այն իրողությունը, որ ՀՀ քաղաքականությունը ևս քիչ դեր չխաղաց Հայաստանի հարցում Խորհրդային Ռուսաստանին դեպի քեմալական Թուրքիան կողմնորոշելու խնդրում: Այս առումով անհասկանալի է հնչում Հ.Չաքրյանի հետևյալ միտքը. «Ռուսական կողմնորոշման հարազատ մնալ նշանակում էր նպաստել թուրքերին բոլշևիկների աջակցությանը, ընդ որում ինքնակամ, երբ թուրքերը լրջորեն սպառնում էին Հայաստանին» (էջ 69): Թուրքերին չաջակցողների բանակում գտնվելու վճռականության դիմաց Հայաստանը թանկ գին վճարեց՝ Կարս, Արդահան, Նախիջևան, թուրքական ավերիչ արշավանքներ դեպի Հայաստան և այլն, և այլն: Դառը դաս է: Դաս, որի իմաստը հետևյալն է՝ Հայաստանի մի-

ջազգային նշանակությունն այնքան փոքր է, որ նրան հակացուցված է խուսանավման քաղաքականությունը: Խուսանավելու իրավունք ունի այն երկիրը, որն «ինքնուրույն քաղաքական գործոն է»: «Մինչդեռ Հայաստանն ընդամենը միջոց էր: Իսկ միջոցները չէին կարող միջազգային ուժերի տեսանկյունից առանձին արժեք ներկայացնել»: Հավանաբար նաև այդ դեր խաղաց, որ Խորհրդային Ռուսաստանը հայկական տարածքները հեշտությամբ զիջեց թուրքերին: Հարցի լուծման գործում բացարձակ անճարակ գտնվեց նաև Խորհրդային Հայաստանի կառավարությունը, որը ստորագրելով Կարսի պայմանագիրը, փաստորեն հրաժարվեց նաև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասից: «Ուրեմն, - գրում է Հ.Չաքրյանը,- խնդիրը տվյալ պարագայում ոչ այնքան իշխանություններն էին, որքան հայ ժողովրդի պատմական հայրենիքի տարածքում ու նրա շուրջ տիրող միջազգային խիստ անբարենպաստ իրավիճակը, որ պայմանավորված լինելով շրջանում գերիշխանության համար ուժային երեք կենտրոնի արևմտյան տերությունների, հեղափոխական Ռուսաստանի և քեմալականների անհաշտ պայքարով, կանխորոշեց Հայաստանի ապագան» (էջ 70):

Ասվածի ճշմարտությունը հաստատող մի փաստ: Մոսկվայի և Կարսի պայմանագրերի ստորագրումից անցել է ավելի քան 75 տարի: Այդ ամբողջ ժամանակաշրջանում Հայաստանի (ինչպես նաև Խորհրդային Միության) կողմից բծախնդրությամբ կատարվել են այդ պայմանագրերի բոլոր կետերը, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ակնհայտ դարձավ, որ Թուրքիայի համար նույնիսկ թուրքանպաստ պայմանագրերը նշանակություն չունեին իր հակահայ կրքերին հագուրդ տալու համար: Մոսկվայի պայմանագրով կողմերը պարտավորվել էին ապահովել «անընդհատ հաղորդակցությունը իրենց երկրների միջև երկաթուղով, հեռագրությամբ և այլ միջոցներով..., ինչպես նաև ապահովել մարդկանց ու բեռների առանց որևէ ձգձգման անխափան փոխադրումը»: (Տես՝ Մոսկվայի պայմանագրի թիվ 9 և Կարսի պայմանագրի թիվ 17 հոդվածները): Հայաստանի անկախանալուց հետո (1991 թ.) «Որպես պատրվակ օգտագործելով Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և 1915 թ. եղեռնից բխող իր պահանջներից Հայաստանի չհրաժարվելը, Թուրքիան մերժեց դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնել Հայաստանի հետ: Դեռ ավելին, Թուրքիան մասնակցում էր Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ ծավալված ռազմարշավին՝ օգնելով Ադրբեջանին ռազմական խորհուրդներով ու սպառազինությամբ և Հա-

յաստանի օդուղիների, երկաթուղու ու ճանապարհների լիակատար շրջափակմամբ, բացառություն չանելով անգամ մարդասիրական օգնության փոխադրումների համար»:

Նկատի ունենալով այդ իրողությունը, ռազմավարական և ազգային հետազոտությունների Հայկական կենտրոնը դեռ 1994 թ. առաջարկեց ՀՀ ղեկավարությանը «պաշտոնական հայտագիր ուղղել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ստորագրողներին, առ այն, որ վերոհիշյալ պայմանագրերով Հայաստանի Հանրապետությանը վիճելիորեն պարտադրված կապերը խզվել են: Այս պայմանագրերի ընդունումը հայ ժողովրդի կողմից և դրանց միջազգային ճանաչումը անհիմն են Թուրքիայի կողմից պայմանագրերի էական խախտումների և Հայաստանը դաժան կործանման ենթարկելու նրա մտադրության լույսի ներքո»: Փաստաթղթերում տրված են նման քայլի միջազգային իրավական հիմնավորումը և դրա հնարավոր հետևանքները:

1920-21 թթ. Արևմուտքում դեպքերն այլ զարգացում ունեցան: Արևմտյան տերությունները Լոզանում «փաստորեն օրինականացրին հայերի հանդեպ նոր Թուրքիայի ղեկավարության՝ քեմալականների, թշնամական վարքագիծը: Փոխարենը՝ Թուրքիան նեղուցների հարցում զիջումներ կատարեց՝ թույլատրեց արևմտյան տերությունների ռազմանավերի մուտքը Սև ծով»:

«Եվ այսպես,- գրում է Հ.Չաքրյանը,- Հայկական հարցի առումով Լոզանը եկավ լրացնելու Կարսի պայմանագիրը՝ այն տարբերությամբ, որ եթե Կարսում ոտնահարվում էր Մեծ Եղեռնի միջազգային ճանաչման համար պայքարելու հայ ժողովրդի իրավունքը՝ ներում շնորհելով ջարդարարներին, ապա Լոզանը ներման իրավունքից զրկեց ու մեղապարտներ ճանաչեց նրանց, ովքեր այլ մեղք, քան կոտորածներից հրաշքով փրկվելն էր, չէին գործել»:

Ապա սկսեց Հայոց ցեղասպանության միջազգային շահարկման տասնամյակներ տևող ժամանակաշրջանը: Մեծ եղեռնի ճանաչումը վերածվեց Արևմուտքի շահամոլ խաղերի առարկայի: Այն տերությունների ձեռքին դարձավ լոկ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու միջոց և այդպես էլ պաշտոնական ճանաչման չի արժանանում: Ելքը, ինչպես ասացինք, հեղինակը տեսնում է այդ խնդիրը սեփական նախաձեռնությամբ միջազգային շահարկումների ոլորտից դուրս բերելու մեջ ու միաժամանակ նշում, որ դա «դյուրին առաջադրանք չէ: Դրա կատարումը, մեծ պետությունների շահերի տեսանկյունից, համազոր լինելով

1915թ. ցեղասպանության միջազգային ճանաչմանը, հազիվ թե նրանց հավանությանն արժանանա»: Ինչ էլ որ լինի, ցեղասպանության անտեղի չարչրկումները որևէ դրական արդյունքի հանգեցնել, բնականաբար, չեն կարող: Բայց նաև այդ պայքարից հրաժարվելն է սխալ: Հետևաբար, իսկապես նոր մոտեցումներ են պահանջվում:

* * *

Ներսես Մկրտչյանի «Հատվածական շահ և ցեղասպանություն» աշխատասիրության մեջ քննարկվում են ցեղասպանության հետ առնչվող ընդհանրական հարցեր: Նա գրում է. «Պատմությունը ցեղասպանության երևույթի հասարակական ընկալման ու դրա ուսումնասիրման ժամանակային ելակետ է ընտրել 19-րդ դարի կեսերը և 20-րդ դարի սկիզբը, որը կապված է Օսմանյան կայսրությունում ոչ թուրք ազգային տարրի ոչնչացման հետ» (էջ 74): Հայկական ցեղասպանությունը ոչնչացման այս մեթոդի առաջին նախադեպն է: Այն կարելի է որակել «դասական», նկատի ունենալով իրագործման դաժանությունն ու նպատակուղղվածությունը, պատմաքաղաքական պատճառների ակնհայտ առկայությունն ու աշխարհաքաղաքական շահերի բացատրելիությունը: Սակայն XX դարի ցեղասպանության արմատները գնում են պատմության խորքերը: Այնուհետև հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում ցեղասպանության 1948 թ. կոնվենցիան, տալիս է արդի ժամանակներում տարբեր երկրներում իրականացված ցեղասպանության գործողությունների բնութագիրը:

«Զանգվածային ոչնչացման գաղափարը,- գրում է նա,- կարելի է ասել, 20-րդ դարում խոշոր պետությունների զարգացման և հզորացման, ազգային անվտանգության հիմնադրույթի միջուկն է»: Հեղինակը վերլուծում է միջուկային դարաշրջանում ցեղասպանության առանձնահատկությունները, որոնք ծրագրում են ոչնչացնել «ոչ թե առանձին մարդկային հանրություններ, այլ ամբողջական աշխարհամասեր»:

Ժամանակակից աշխարհում ցեղասպանությունը պատերազմների և, մասնավորապես, միջուկային պպատերազմների ոչ միայն բաղադրիչը, այլ նպատակն է:

* * *

Ցեղասպանության ընդհանրական խնդիրներն են քննվում նաև Աղասի Ենոքյանի «Հեղափոխական ցեղասպանություններ» աշխատասիրության մեջ: Ինչպես նշում է հեղինակը՝ ցեղասպանության կոնվեն-

ցիան ընդունելուց հետո (1948 թ.) «ընկած ժամանակաշրջանում տարբեր երկրների կառավարությունների կազմակերպած ջարդերը կրկնակի շատ զոհեր են պատճառել, քան նույն ժամանակի պատերազմներն ու բնական աղետները», ահա թե ինչու ժամանակակից «քաղաքագիտական միտքը փորձում է նույն [ցեղասպանության դեմ պայքարի] հնչեղությունը հաղորդել տարբեր երկրներում իշխող վարչակարգերին անհաճո սոցիալական խմբերի և այլախոհների ոչնչացման խնդրին» (էջ 80):

* * *

Վերադառնանք Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանը: Այդ երկու խնդիրների քննարկումներն ուղղակիորեն առնչվում են քուրդ ժողովրդի պատմությանը, ուստի նպատակահարմար համարեցինք այս թողարկման մեջ ընդգրկել նաև Հ.Չաքրյանի «Ազգային հարցի ակունքները Թուրքիայում. Քրդական շարժումը Հայ դատով հավասարակշռելու թուրքական միտումի էությունը» ուսումնասիրությունը:

Օսմանյան կայսրության փլատակներից ձևավորված թուրքական Հանրապետությունը ևս բազմազգ պետություն է: Քանի որ ազգային խնդիրները օսմանյան շրջանում ընդամենը շահարկվել էին և ոչ թե լուծվել, ուստի դրանք, բացառությամբ Հայկական հարցի, գրեթե նույնությամբ փոխանցվեցին քեմալականներին: Սակայն «վերջիններս... հրաժարվեցին ճանաչել ոչ թուրք ժողովուրդների ազգային իրավունքները, ինչը հանգեցրեց ազգային խնդիրների սրմանը...», մանավանդ, որ «քեմալականները նպատակադրվել էին ստեղծել միասնական ազգային պետություն...: Եթե ազգային խնդիրների առկայությունը երկրում նրանց [քեմալականների] կողմից դիտվում էր լուրջ խոչընդոտ ազգային միասնական պետության կառուցման ճանապարհին, ապա Թուրքիայի բազմազգ բնույթը կասկածի տակ էր դնում թուրքական նոր պետության սահմանների ճշգրտումը ազգային սկզբունքների պահպանման հիմքի վրա: Նման իրավիճակում քեմալականները կանգնեցին երկրում ազգային փոքրամասնությունների առկայության ժխտման դիրքերում» (էջ 3):

Թուրք գիտնականների առջև խնդիր դրվեց ապացուցել «Անատոլիայում թուրքերի տեղական ծագումը», «թուրքերի իրավունքը նորաստեղծ թուրքական պետության տարածքների նկատմամբ» և գիտականորեն հիմնավորել «Թուրքական բնակչության ցեղային միասնությունը»: Սակայն «գիտական հիմնավորումը» մի բան է, իսկ իրական

կյանքը մի այլ բան: Թուրքիայում, բացի թուրքերից, բնակվում էին տասնյակ այլ ժողովուրդներ, որոնք թվական առումով ազդու տեսակարար կշիռ էին կազմում: Ինչպե՞ս լուծել այդ խնդիրը: Զուլել՝ եղավ պատասխանը: Ահա այս որոշումն առաջին պլան մղեց քրդական հարցը: Քեմալականները գտնում էին, որ Թուրքիայում քուրդ չկա, որ քուրդ կոչվածները հետամնաց լեռնային թուրքեր են: Քրդերը, որոնք Թուրքիայում ամենախոշոր ազգային փոքրամասնությունն են, իսկ արևելյան շրջաններում մեծամասնություն էին կազմում, թուրք դառնալ համառորեն չէին ուզում և ոչ միայն չէին ուզում, այլև պայքարի ելան իրենց ազգային իրավունքների համար: 1920-30-ական թվականներին տեղի ունեցան քրդական մի շարք խոշոր ապստամբություններ: Պայքարի առաջնեկները Դերսիմի քրդերն էին: Նրանց ապստամբությունը շեյխ Սայիդի գլխավորությամբ արագ տարածում գտավ և ընդգրկեց 14 վիլայեթ: Թուրքական կառավարությանը, չնայած, հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը, սակայն դաժանությունը, որ գործադրվեց որպես ճնշման միջոց, շեշտակիորեն սրեց թուրք-քրդական հարաբերությունները, ինչը և առաջացրեց ապստամբությունների մի երկար շղթա: 1927թ. Մեծ և Փոքր Մասիսների շրջանում բռնկված ապաստամբությունը քրդական պետության ստեղծման նպատակ էր հետապնդում և իր ոլորտի մեջ առավ արևելյան բոլոր վիլայեթները:

Քեմալն ու նրա համախոհները լավ հասկանում էին, որ միայն զենքի ուժով քրդերին խաղաղեցնել հնարավոր չէ. քանի դեռ նրանք Արևելքում մեծամասնություն են կազմում: Նախ սկսեցին քրդերին բռնագաղթեց Անատոլիայի խորքերն ու մեծ քաղաքներ, 1935 թ. օգոստոսին 21-ին հրապարակվեց Իսմեթ Ինյոնյուի «Քրդական զեկուցագիրը»: Ծագումով քուրդ, այդ թուրք գործիչը խնդիր էր դնում քրդերի գիտակցության մեջ ներարկել թուրք ազգային ընդհանրությանը պատկանելու գիտակցությունը: Դրա հետ մեկտեղ Ինյոնյուն կառավարության ուշադրությունն էր հրավիրում արևելյան վիլայեթներում վարչական իշխանության ուժեղացման, թուրքական իշխանությունների հետ արաբ և ասորի ազգաբնակչության մերձեցման և նման այլ խնդիրների վրա (էջ 5):

Զեկուցագրում մեծ տեղ էր հատկացված քրդաբնակ նահանգներում թուրք ազգաբնակչության թվի ավելացման, Դիարբեքիրը (որը քրդերը համարում էին «Միացյալ Քրդաստանի մայրաքաղաք») երկրի հարավարևելքում թուրքական համընդհանուր կենտրոն դարձնելու խնդիրնե-

ոին: Զեկուցագիրը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Արևմտյան Հայաստանի հետեղեռնյան կացության, նրա ազգային կազմի, սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ: Ահա մի քանի տեղեկություններ այդ զեկուցագրից: Դիարբեքիրը «կորպուսի սպայակույտի նստավայր էր»: Մարդինի վիլայեթի 260 հազար բնակչության կազմում թուրքեր գրեթե չկային: Քրդերն անբարյացկամ էին տեղաբնակ ասորիների նկատմամբ, վերջինների մտահոգության գլխավոր աղբյուրը, սակայն, «բռնագաղթի սպառնալիքն է»:Սղերդը «արաբական քաղաք է», իսկ վիլայեթը ամբողջությամբ բնակեցված է քրդերով, և այնտեղ Անկարայի միակ հենարանը իշխանություններն ու կայազորի սպաներն են: Բիթլիսի մասին. «պետական ուժեղ միջամտության շնորհիվ է, որ Բիթլիսն արհեստականորեն վեր է ածվել թուրքական քաղաքի և թուրքական կենտրոնի: Դրա՝ որպես թուրքական կենտրոնի պահպանումը նորից հնարավոր է միայն պետության հովանավորությամբ: Աչքաթող անելու դեպքում քաղաքը կվերածվի քրդական գյուղի և, ամենայն հավանականությամբ, Մուքքիի [Մոկսի], Հիզանի [Խիզանի], Շիրվանի, Գարզանի [Խարզանի] պես վայրերում թուրքերենը այլևս կդադարի խոսակցական լեզու լինել: Հետևաբար, մենք պարտավոր ենք ամեն գնով Բիթլիսը պահպանել, որպես թուրքական հզոր ամրոց» (էջ 7):

Վանի մասին. «Վանի՝ բնակչությունը թշվառ վիճակում է: Իրականում նախկին վանեցիների զգալի մասը դեռ քաղաք չի վերադարձել... Բարգավաճ Վան քաղաքը երկրի արևելքում հանրապետության հիմնաքարն է հանդիսանալու»: Վանի շրջակայքի «թուրքաբնակ գյուղաքաղաքները միաբերան պահանջեցին, որպեսզի իրենց շրջակայքը թուրք բնակչությամբ բնակեցվի: Չի կարելի չնկատել այն դողէրոցքը, որ, կարծես, անծայրածիր ծովում, շրջապատի ամայությունից բխող մենության զգացումով ապրում էին թուրքական բնակավայրերը»:

«Թուրքական էրջիշ [Արճեշ] քաղաքում մնացի մի քանի ժամ: Այդ ընթացքում հուզմունքով լսեցի, թե էրջիշցիները ինչպիսի հերոսություն են ցուցաբերել՝ պաշտպանելով քաղաքը քրդական ապստամբության ժամանակ»:

«Մուշը երեք-չորս հազարանոց փոքրիկ քաղաք է [այսինքն՝ 1912 թ. համեմատությամբ քաղաքի բնակչության թիվը ոչ միայն չէր ավելացել, այլև կրճատվել էր մոտ երկու անգամ,- Ս.Պ.]: Այն, որպես վիլայեթի կենտրոն, բարգավաճում է: Քրդերն աստիճանաբար բնակեցնում են Մշո դաշտավայրում ամայի հայկական գյուղերը»:

«Բուլունքը [Բուլանըխը] գավառային կենտրոն է... Ունի շուրջ 1500 բնակիչ: Սրանք երեք-հինգ տարվա տարբերությամբ Չլդրից, Ախալքալաքից և Երևանից ժամանած գաղթականներ են: Բոլորն անխտիր տժգոհում են ինչպես պայմաններից, այնպես էլ իշխանության տեղական մարմիններից»:

«Մանազգիրթի [Մանազկերտի] նման թշվառ ու խղճուկ վայր դժվար է պատկերացնել»:

«Քարաքյոսեն [Բայազետ գավառ] կառավարամետ քրդական քաղաք է»: Ինյոնյուի կարծիքով քուրդ երիտասարդության զինակոչումը ճանակ կխթանի նրանց մեջ թուրքական ինքնագիտակցության զարգացմանը:

«Իգդիրում բնակչությունը տեղաբնակ է և նպատակահարմար չէ նրանց այլ վայրեր տեղափոխել ու քրդերին այս բերրի հարթավայրից ո՞ւր ենք տեղափոխելու: Սահմանամերձ հողերն անհապաղ քրդերով պետք է բնակեցվեն»:

«Պարտավոր ենք երկրի ներսում և նրա սահմաններից դուրս համոզել բոլորին, որ մենք ոչ թե Կարսն ու Արդահանն ավերելու մտադրություն, այլև մեր ողջ կարողությամբ դրանք պահելու-պահպանելու անսասան վճռականություն ունենք»:

«Էրզրումի բարգավաճումն ապահովելու դեպքում մենք կստեղծենք թուրքական այն կենտրոնը, որն ամուր հենարան կլինի մեզ համար, ինչպես հյուսիսում սահմանի... այնպես էլ երկրի ներսում քրդերի դեմ»:

Ավարտելով իր շրջագայությունների և անձնական տպավորությունների արդյունք այդ զեկուցագիրը, Իսմեթ Ինյոնյում գրում է. «Էրզինջանի շրջակայքի ամայի գյուղերը դեսիմցիներն են լցնում: Թող դա առավելագույնս մտահոգի մեզ, որովհետև Էրզինջանի վիլայեթի վերածումը լիարժեք քրդական մարզի նախահող կստեղծի այն սարսափելի իրողության համար, որը Քրդաստանի ստեղծումն է»:

Թե՛ Աթաթուրքի և Ինյոնյուի և թե՛ նրանց հաջորդների ջանքերը՝ ինչոր ձևով հպատակեցնել քրդերին, մինչև օրս էական հաջողության չեն հասել: Չախողվեց քրդերին թուրքացնելու, արևելյան նահանգների ազգային կազմը փոխելու ջանքերը: Միակ իրական ուժերը, որոնք տասնամյակներ առաջ, նաև մեր օրերում, հակակշռում են քրդերին՝ դա թուրքական բանակն ու քուրդ ցեղապետների մի մասն է: Բայց եթե նկատի ունենանք, որ շեյխերի և աշիրաթապետերի ազդեցությունը քուրդ զանգվածների վրա գնալով նվազում է, և քրդերը, ազատվելով

աշիրաթական գիտակցությունից, բարձրանում են, ընդհուպ, մինչև քուրդ ժողովրդի համազգային շահերի գիտակցման աստիճանին, ապա Թուրքիայում բնակվող 14 միլիոն (երկրի ամբողջ ազգաբնակչության 25-30%-ը) քրդերի դիմաց կանգնած է մնում միայն բիրտ ռազմական ուժը: Նման կացությունը չի կարող կասեցնել ազգային շարժման զանգվածային ծավալումը, և պատահական չէ, որ վերջին տասնամյակում քրդական շարժումը, որի ղեկը ստանձնել է Քրդական բանվորական կուսակցությունը, համաժողովրդական բնույթ է կրում:Քրդերի և թուրքական բանակի միջև պատերազմ է ընթանում, այն իր մեջ ներառել է 22 վիլայեթ: Քրդական շրջանները վերածվել են ռազմական ճամբարների, պարտիզանական կռիվների թափն այնպիսին է, որ չնայած քրդերի դեմ գործում են ժամանակակից ռազմական տեխնիկայով զինված՝ շուրջ 400 հազարանոց բանակային ուժեր (ռազմաօդային, հրանետային ու տանկային ստորաբաժանումներ), դրանք էական հաջողության հասնել չեն կարողանում: Դրա փոխարեն՝ այս անգամ արդեն Թուրքիայի տարածքային ամբողջությունն իրոք վտանգված է: Քրդերը չեն թաքցնում իրենց մտադրությունները: Նրանք թուրքական Ազգային մեծ ժողովում նույնիսկ հարց բարձրացրին՝ քրդացնելու արևելյան նահանգների տեղանունները:

«Ամենևին պատահական չէ,- նկատում է Հ.Չաքրյանը,- նաև Սևրի դաշնագրի վերակենդանացման շուրջ թուրք հասարակայնության լայն շրջանակներում ծավալվող քննարկումները: Հուսահատությունը համակել է շատերին... Հանրապետության նախագահ Ս.Դեմիրելը... խուճապի չմատնվելու կոչեր է անում բնակչությանը...» (էջ 12):

Քրդական հարցի «անխնա շահարկումները միջազգային ուժերի կողմից, առավել ևս դրա օգտագործումը Թուրքիայի դեմ որպես ազդեցության լծակ, Անկարային փաստի առաջ են կենգնեցնում» (էջ 12): Երկրում գնալով ավելի ու ավելի հիասթափվում են ռազմական ուժով քրդական շարժումը ճնշելու տարբերակից և պահանջում են քաղաքական լուծումներ, նույնիսկ առաջարկներ են լսվում քրդաբնակ շրջաններում «բարեփոխումներ, անցկացնելու մասին: Այդ կապակցությամբ Ք.Գյուրունը գրում է, թե «բարենորոգումները» իրեն հուշում են Օսմանյան կայսրությունում շուրջ 100 տարի առաջ սկիզբ առած հայկական ապստամբությունների մասին: «Ուշագրավ է, որ ներկայումս ՔԲԿ-ն,- գրում է նա,- նույնությամբ ընդօրինակում է հայ հեղափոխականների՝ նախ հնչակյան, ապա նաև դաշնակցական զինյալ խմբերի գործելա-

կերպը: Իսկ վերջիններիս պայքարը... «բարենորոգումների» իրագործման առաջադրանք ուներ և փաստորեն հասել էր իր նպատակին... Եթե չբռնկվեր Առաջին համաշխարհային պատերազմն ու դրան չհաջորդեր Ազգային անկախության պայքարը, ապա համոզված կարելի է ասել, որ տվյալ վիլայեթները [հայկական վեց վիլայեթները], որոնք ենթակա էին «բարենորոգումների», այժմ հազիվ թե Թուրքիայի կազմում լինեին»: Գյուրունը «եթեների» շարքում հասկանալի պատճառով չի նշում «եթե չլիներ հայերի ցեղասպանությունը», բայց առանց դրա էլ նրա խոսքերից ամենայն որոշակիությամբ հասկացվում է, թե թուրքերն ինչո՞ւ ոչնչացրին հայերին: Եվ պատահական չէ, որ թուրք դիվանագետը դեմ է քրդաբնակ շրջաններում բարեփոխումներին, դրանք համարելով քայլ՝ քրդերի անկախացման ուղղությամբ: Իսկ քրդերն, իրոք, ձգտում են ինքնորոշման: Դրությունն ավելի է բարդանում նրանով, որ «քրդական շրջաններ» հասկացությունը, կառավարության կողմից տասնամյակներ շարունակ կազմակերպած բռնագաղթերի շնորհիվ, ընդգրկել է երկրի լայն շրջանները՝ մինչև Անատոլիայի խորքերը և Կ.Պոլիս ու Զմյուռնիա (միայն այս երկու քաղաքներում շուրջ 4 միլիոն քուրդ է բնակվում): Այսինքն՝ ազգաբնակչության կազմի առումով Քրդստանի է վերածվել ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Եփրատից արևմուտք ընկած անատոլիական լայնածավալ շրջանները:

«Քրդական շարժման ծավալմանը զուգընթաց,- գրում է հեղինակը,- հայ դատին ու պահանջատիրությանն ապավինելու փորձեր Թուրքիայում արդեն իսկ արվում են: Թուրքական քաղաքական գրականության մեջ սկսել են երևալ «Հայկական կոտորածներ» արտահայտությունները, արդեն ձայներ են հնչում ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Նույն Գյուրունը գրում է. «Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր հայերին պաշտպանել քրդերի ոտնձգություններից, ապահովելով նրանց անվտանգությունն ու անդորրը...:

1915 թ. տեղահանության ընթացքում կատարված անօրինակությունները, որոնք տեղ էին գտել իշխանությունների կամքին հակառակ և դրանց առնչությամբ դատական գործ էր հարուցվել, գրեթե ամբողջությամբ քրդական աշիրեթությունների շնորքն էր»:

Ո՞րն է դիրքորոշման նման շրջադարձի պատճառը: Պատմական ճշմարտության հաղթանակի ձգտո՞ւմը, մեղքերի խոստովանության պահա՞նջը, էլի նման ինչ-որ բա՞ն: Թերևս: Բայց այս ամենում չտեսնել քրդական շարժման հաջողությունների ազդեցությունը, սխալ կլինի:

Շատ ավելի հավանական է, որ մենք տվյալ դեպքում գործ ունենք «քաղաքական նուրբ հաշվարկների հետ, որոնք ծառայում են Թուրքիայում քրդական հարցի չեզոքացման վերջնական նպատակին» (էջ 13):

«Այդ նպատակի համար Գյուրունը հնարամտորեն օգտագործում է Հայկական հարցը: Արևմտահայաստանի զգալի մասի քրդացումն ու քրդական շրջանակների հավակնությունները տվյալ տարածքի հանդեպ նրան տալիս են Հայկական հարցը քրդականին հակադրելու հիմքեր և այսպես, թեկուզ և տնտեսական հարթության վրա, ուրվագծվում է հայ-քրդական հնարավոր հակամարտությունը» (էջ 13):

Թուրք հրապարակախոս Իլիան Սելչուկը գրում է. «Ըստ Սևրի հայտնի են հույների պահանջները: Հայերն իրենց պահանջով նրանց չեն զիջում: Անատոլիայում Հայաստանը որտե՞ղ է սկսվում: Իսկ որտե՞ղ է վերջանում Քրդստանը: Դժվար է ասել: Սակայն ակնհայտ է, որ, եթե հանկարծ թուրքերն արանքից դուրս գան, հյուսիսից շարժվող հայերն ու հարավից մագլցող քրդերն Արևելյան Անատոլիայում միմյանց կոկորդ են կրծելու: Առայժմ արագաշարժ քուրդ եղբայրներից ոմանք նեղ ազգայնականության ակնոցն աչքերին քառասմբակ դեպի վեր են սլանում հարավից»:

Հայ-քրդական հակամարտության ձևավորումը թուրքական քաղաքականության մեջ միշտ էլ կարևոր տեղ է գրավել: Այդ քաղաքականության հետևանք է քրդերի վարքագիծը 1894-96 և 1915-17 թվականներին: Միևնույն հայրենիքի համար երկու դրկից ժողովուրդներին իրար դեմ լարերով օսմանյան քաղաքականության արմատները ձգվում են մինչև XV-XVI դարերը: Այդ նրանք՝ թուրքերը, քրդերին իրենց իսկական հայրենիքից՝ Տավրոսից հարավ ընկած շրջաններից տեղափոխեցին Արևմտյան Հայաստան, հայերին հակակշիռ ստեղծելու, նրանց արտամղելու համար: Հետո քրդերի մեջ ներարկվեց մտայնությունը, թե նրանց հայրենիքին է նաև Տավրոսից հյուսիս ընկած շրջանները՝ Արևմտյան Հայաստանը և, եթե քրդերը չխորտակեն հայերին իրենց ազգային իղձերի հետ միասին, այդ ռայան կդառնա Արևելյան Անատոլիայի տերն ու ռայա կդարձնի իրենց՝ քրդերին:

Առաջին հայացքից թվում է, թե սուլթաններն իրենց հաշիվներում չեն սխալվել: Նրանց հաջողվեց քրդին դարձնել հայի դահիճ: Սակայն այդ միայն առաջին հայացքից: Քուրդը հայերին ոչնչացնելու գործում երբեք որևէ շահագրգռվածություն չի ունեցել: Ի տարբերություն թուրքի, նա գերադասում էր հային ոչ թե սպանել, այլ թալանել: Եվ, որ քուր-

ը մասնակցեց հայերի կոտորածներին, այդ բխում էր ոչ թե քրդերի շա-
ներից կամ բնավորությունից, այլ հետևանք էր թուրքերի սադրանքնե-
ի և քուրդ ցեղապետերի դավաճանության:

Թուրքը քրդի օգնությամբ Արևմտյան Հայաստանը մաքրազարդեց
ուրա բնիկներից՝ հայերից: Իսկ հայերի անհետանալն իրար դեմ կանգ-
նեցրեց երեկվա դաշնակիցներին՝ թուրքերին ու քրդերին, և սկսեց
Արևմտյան Հայաստանը հայրենիք դարձնելու մի նոր մահ ու կենաց
կռիվ, այս անգամ արդեն քրդերի ու թուրքերի միջև: Քրդերի պայքարն
ունեցել է վերելք ու տեղատվության ժամանակաշրջաններ, եղել են
սպահեր, երբ, կարծես թե, թուրքերին հաջողվել է թաղել Քրդական հար-
ցը, սակայն ազատագրության կրակը չի հանգել, և նորից ու նորից բոր-
բոքվել ու այսօր էլ բորբոքվում է հարաճուն ուժով: Նախախնամության
կամքն է՝ ուրիշի ունեցվածքին տիրանալու համար թափված արյունը
հակադարձ դաժանություն ունի: Քրդական շարժումը Թուրքիայի աքի-
լեսյան գարշապարն է, հայի հեղված արյան համար դատաստանի
առջև թուրքերին կանգնեցնելու աստվածային վճիռը:

Ինչպես 100 տարի առաջ, այնպես էլ այսօր թուրքերը մահու չափ
վախենում են հայ-քրդական դաշինքից, հնարում են ամեն տեսակի հե-
քիաթներ հայ-քրդական ռազմական համագործակցության մասին՝
ուղղված Թուրքիայի դեմ: Թ.Չիլերը, նման դաշինքի հնարավորությու-
նից ահաբեկված, հայտարարում է. «Մեզ վերջնականապես հաջողվել
է փաստել, որ ՔԲԿ-ն համագործակցում է հայերի հետ, իսկ վերջիններն
Իրանի վրայով թափանցում են Թուրքիա: Հայերը հավատացյալ չեն,
ուրեմն ահաբեկիչները համագործակցում են անհավատների հետ»:
Թուրքերի համար ազատության մարտիկներն ահաբեկիչներ են: Երեկ
ահաբեկիչ էին բուլղարացիները, մակեդոնացիները, հայերը, իսկ այ-
սօր՝ քրդերը: Մարտնչող քրդերն ահաբեկիչ չեն, այլ ազգային-ազա-
տագրության մարտիկներ, և այլևս Թուրքիայի մաքիավելական խար-
դավանքները հազիվ թե կարողանան նոր հակամարտություն ստեղծել
հայերի ու քրդերի միջև: